

**Սարգիս Գ. Պետրոսյան**  
*Պատմ. գիտ. դոկտոր*

**ՎԻՊԱԿԱՆ ՀԱՅԿԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԿԸ ԵՎ ՆՐԱ  
ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ\***

**Բանալի բառեր** – Հայկ, Հայկն/Օրին, ավանդագրույց, ցեղ, աստված, ոստան, Հարք, ցեղամիություն, եռադասություն, ժառանգություն:

**Մուտք**

Հայկ Նահապետի վիպական կերպարը քաջ հայտնի է Մովսես Խորենացու, Անանուն պատմիչի (Մեբեոս), մասամբ նաև հետագա մատենագիրների և բանահավաքների գրառումներից: Այդուհանդերձ, հայագետների հատուկ ուշադրությանը գրեթե չեն արժանացել հայախոս էթնոսի կյանքում այդ կերպարի նախատիպ **պատմական** (իրական, անձնավորյալ) Հայկի իրականացրած բարեփոխումները և հայոց պետականության, հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության, հայոց հնագույն միասնական պաշտամունքի ձևավորման գործում դրանց ունեցած կարևոր դերը: Սույն հոդվածը նպատակ ունի՝

- 1. վիպական Հայկի կերպարից առանձնացնելու պատմական Հայկին վերաբերող մասը և հստակեցում մտնելու նրա գործունեության մեջ,**
- 2. պատմական Հայկի իրականացրած բարեփոխումները վերլուծելով՝ բացահայտելու դրանց էությունը և հետագա ընթացքը:**

Վիպական Հայկի կերպարում նրա պատմական նախատիպի գծերի պահպանված լինելու մասին է նախ և առաջ վկայում Պատմահայր Մովսես Խորենացու անգուգական երկում Հայկի արտաքինի նկարագրությունը: Սրանից պարզվում է, որ Հայկն ունեցել է ուրիշներից իրեն տարբերող մի յուրահատկություն՝ խայտակն էր: Ի՞նչ է նշանակում միայն Հայկին բնութագրող (ընդ որում՝ երկիցս) և այլուր չգործածված **խայտակն** բառը<sup>1</sup>:

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 29.03.2022:

«Նոր հայկազեան բառարան»-ի հեղինակները այն հասկանում են «խայտ կամ խայտալից աչօք. գուարթագին, քաղցրահայեաց»<sup>2</sup>, Ստ. Մալխասյան-ցը թարգմանում է «վառվառն աչքերով»<sup>3</sup>, իսկ Հ. Աճառյանը՝ «աչքի մեջ՝ սպիտակուցի վրա բիծ կամ նշան ունեցող»<sup>4</sup>: Ճիշտը Հ. Աճառյանի թարգմանությունն է, որովհետև **խայտ-ակն** բառի առաջին բաղադրիչը նշանակում է «խատուտիկ, պիսակավոր» և «նշան»: Հմնտ. **կարմրախայտ** ձկնանունը<sup>5</sup>, որը մղում է ենթադրելու, թե Հայկի աչքի խայտը ևս կարմիր էր՝ արյան նշան: Հավանաբար մեր նախնիներն այդպիսի նշանով մարդուն համարել են գեղեցկության տիպար: Այդպես է վարվում Մովսես Խորենացին Արտաշես I-ի (մ.թ.ա. 189-160 թթ.) զորավար Սմբատ Բագրատունու արտաքինը նկարագրելիս. «...սակաւ ինչ արեան նիշ ունելով յաչսն՝ որպէս դրակոնտիկոն ի վերայ ոսկոյ և ի մէջ մարգարտոյ ծագէր»<sup>6</sup> (դրակոնտիկոնը թանկագին կարմիր քար է):

## 1. Հայկի պաշտամունքը նախնական տեսքով

Ըստ Մ. Աբեղյանի՝ Հայկի առասպել-ավանդազրույցն իր սկզբնական տեսքով «ծագած է ընդհանուր առասպելաբանական աշխարհայեցությունից... Հայոց նախնին՝ դիցագն Հայկը, դարձել է առասպելաբանական աղեղնավորը կամ, որ միևնույն է, հայոց պաշտելի նախնին նույնացել է աստված աղեղնավորի հետ»<sup>7</sup>: Այս դառնալ-նույնանալը տեղի էր ունենալու դեռևս Սառցապատման դարաշրջանում. ոչ ուշ, քան մ.թ.ա. X հազարամյակում տեղի ունեցավ Հալոցքը: Կարծում ենք, որ ըստ այդմ է Հարավային Միջագետքի բնակիչ Բելը Հայկի բնակության վայրը բնութագրում «ի մէջ ցրտութեան սառնամանեաց» արտահայտությամբ, իսկ Հայկի տոհմը «հանդերձ որդուովք իւրովք և դստերօք և որդւոց որդուովք՝ արամբք զօրաւորօք թուով իբրեւ երեքհարիւր»<sup>8</sup> էր: Անշուշտ, այդ խոսքերը և Հայկի տոհմի նվազ թիվը շատ ավելի հեռավոր ժամանակներ են նշում, քան Հայկի և Բելի պատմական նախատիպերի ժամանակաշրջանն է: Դրանցում արտա-

1 Տես **Մովսիսի Խորենացու** պատմություն Հայոց (այսուհետ՝ **Խորենացի**), Քննական բնագիրը՝ **Մ. Աբեղյանի** և **Ս. Հարությունյանի**, Եր., 1981, Ա, Ժ, Ա, Ժա:

2 «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (այսուհետ՝ ՆԸԲ), հատ. I, Եր., 1979, էջ 918: Կ. Պոլսի բարբառի **անուշ** բառն է, ամենայն հավանականությամբ, ազդել բառի «քաղցրահայեաց» բացատրության դեպքում, որի համարժեք Սեբաստիայի բարբառի **խումար** բառը նշանակում է «վիթր ինչ շիլ հայացքով» (տես **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան (այսուհետ՝ ՀԱԲ), հատ. II, Եր., 1973, էջ 419):

3 **Խորենացի**, (**Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմ. և մեկնաբանությունները՝ **Ստ. Մալխասյանի**), Եր., 1981, էջ 39, 43:

4 ՀԱԲ, հատ. II, էջ 326:

5 Տես նույն տեղում:

6 **Խորենացի**, Բ, Ժբ (էջ 217 և 496):

7 **Աբեղյան Մ.**, Երկեր, հատ. I, Եր., 1966, էջ 44: Հայկի վիպական կերպարում անձնավորյալ՝ պատմական Հայկի մասին բաղադրիչի ներմուծումը մ.թ.ա. III հազարամյակի կեսին սկսված լինելու վերաբերյալ տես **Պետրոսյան Ա.**, Հայոց մեհենագրության ակունքներում, Գյումրի, 2008, էջ 22-23:

8 **Խորենացի**, գիրք Ա, գլ. Ժա:

ցուված է պատմական Հայկի հեռավոր նախնի տոհմապետերի ապրած Սառցապատման ժամանակաշրջանը, որը ևս իր հետքն է թողել Հայկի վիպական կերպարի ձևավորման վրա:

Հայաստանի ժայռապատկերներում Հայկ աստծո տոտեմ-խորհրդանիշ քոշը (բեզուարյան այծ) երբեմն պատկերված է՝ միացած կամ համադրված սուր կամ կոր անկյուններով Ջ կամ 8 միևնույն բովանդակությամբ նշանի հետ<sup>9</sup>: Դա Հայկ աստծո խորհրդանշանն է՝ նրան ձոնված<sup>10</sup> և նրա անունով **Հայկ/Հայկն** կոչված Օրիոն համաստեղության պայծառ աստղերը մտացի միավորած գծապատկերը: Սառցապատման դարաշրջանի նախնադարյան որսորդները կայծքար ու հրահան էին պահում<sup>11</sup> և նույնպիսի վարքագիծ վերագրում իրենց որսորդ աստծուն, մեր նախնիների դեպքում՝ աղեղնավոր Հայկին: Ըստ այդմ՝ Հայկի խորհրդանշանն ընկալվել է որպես գագաթներով դեմ դիմաց գտնվող կայծքար և հրահան, որոնց բախումից կայծեր են առաջանում, և կրակ է վառվում: Վաղ նախնադարի մարդկանց պատկերացումներում որսորդ աստվածը նաև կրակի աստված էր, որը հրեղեն, բոցեղեն էր: Այդպիսին է ըմբռնվել ինչպես Հայկ աստվածը, այնպես էլ նրա զուգահեռ կերպարները հայախոս էթնոսի տարբեր հատվածներում: Այդպիսի կերպարի կատարյալ պատկերներ են ի ցույց հանում Գեղամա լեռների ժայռապատկերները: Դրանց վերաբերյալ Հ. Մարտիրոսյանը գրում է, որ «Այծերի և նշանագրերի հետ պատկերված որոշ աստվածություններ . . . պարզապես լուսավոր ճառագայթ-կայծակների տարերային դրսևորումներ են, հրացուլքի պատկերներ»<sup>12</sup>:

Այդպիսին է ըմբռնվել նաև նախնական Հայկ աստվածը, ինչի վկայներն են նրա **Աբեթածին** և **Աբեթայն** մակդիրները<sup>13</sup>: Թե՛ դրանք հիշատակած Անանուն պատմիչը (Սեբեոս) և թե՛ նրա նման Մար Աբասին հետևած Մովսես Խորենացին դրանք համարել են հետևանքը Հայկի՝ իբրև թե աստվածաշնչյան Նոյ Նահապետի Հաբեթ որդու սերունդներից մեկը լինելու իրողության: Նոյի այս որդին եբրայերեն Yāfet էր կոչվում, իսկ Աստվածաշնչի հունարեն թարգմանության մեջ՝ Ἰάφεθ: Հայերեն (գրաբար) ձևը՝

9 Տե՛ս **Մարտիրոսյան Հ., Իսրայելյան Հ.,** Գեղամա լեռների ժայռապատկերները, «Հայաստանի հնագիտական հուշարձանները. ժայռապատկերներ», 6, պրակ II, Եր., 1971, նկ. 150, 152, 153, 192, 203, 260, 299, 304, 309, 327, **Մարտիրոսյան Հ.,** Հայաստանի նախնադարյան նշանագրերը և նրանց ուրարտա-հայկական կրկնակները, Եր., 1973, էջ 22 (նկարները էջ 23):

10 Տե՛ս Աստուածաշունչ, Յոթ. ԼԸ, 31, Ես. ԺԳ, 10, **Պետրոսյան Ա.,** Հայոց մեհենագրության ակունքներում, էջ 7-8: Նախնական Հայկի վերաբերյալ տե՛ս **Պետրոսյան Ա.,** Մի ժայռապատկերի մեկնաբանման և պատկերագրության վերծանման փորձ, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», հատ. XII, Եր., 2009, էջ 63-71:

11 Նախկին Անգեղտուն գավառի (Պիարբեքիր քաղաքից հյուսիս-արևմուտք) Չայոնյու հնավայրի մ.թ.ա. VIII-VII հազարամյակների ստորին շերտերում գերակշռում են կայծքարե նետապաթները, այնուհետև շերտից շերտ ավելանում է վանակաղը (օբսիդիան), որը վերին շերտերում հավասարվում է կայծքարին (տե՛ս Oates J., The background and development of early farming communities in Mesopotamia and Zagros, "Proceedings of the Prehistoric Society", 1975, vol. 39, էջ 150):

12 **Մարտիրոսյան Հ.,** նշվ. աշխ., էջ 15:

13 Տե՛ս **Սեբեոսի** եպիսկոպոսի Պատմութիւն, Բաղդատույթեամբ ձեռագրաց, հանդերձ առաջաբանի եւ ծանօթութեամբ ի ձեռն Սո. Մախխեսեանց (այսուհետ **Անանուն (Սեբեոս)**), Եր., 1939, գլուխ Ա, էջ 2, 5:

**Ֆարեթ**-ը, եթե ուղղակիորեն հունարենից փոխառված լիներ (Աստվածաշնչի շատ անունների նման), ապա Հ. Աճառյանը տեղին հարց չէր տա, թե «ինչո՞ւ է հայ. դրված **բ** փոխանակ **փ**-հուն.  $\varphi$ »<sup>14</sup>:

Մենք էլ մեր հարցերը տանք: Եթե **Աբեթածին** անվան մեջ **ծին**-ը ուղղակի իմաստով է գործածված, ապա ինչո՞ւ է Հայկը կոչվում **Աբեթածին**, երբ նրա հայրը Թորգոմն էր («Թորգոմ ծնանի գՀայկ»)՝<sup>15</sup>, իսկ Հաբեթը նրա պապի պապն էր: Իսկ ինչո՞ւ անտեսենք **Աբեթայն**-ը: Կարծում ենք, որ **Աբեթ** անվան մեջ **բ**-ն հայտնվել է **փ**-ի փոխարեն հայերեն **աբեթ** բառի հետ բաղարկվելու հետևանքով: **Աբեթ** նշանակում է «լուցկիք. նիւթ վառելի՝ ի կտաւէ կամ ի սնկոյ»<sup>16</sup>, որից ունենք **աբեթենի** «մի տեսակ սունկ, որ իբրև մակաբույծ բուսնում է որոշ տերևավոր ծառերի վրա և որի գլուխը՝ առանձին պատրաստությամբ հետո իբրև դյուրավառ նյութ գործ էր անվում կրակ ստանալու համար»<sup>17</sup>: Ուրեմն Հայկի **Աբեթածին** և **Աբեթայն** մակդիրները ծագում են **աբեթ** բառից. առաջինը նշանակում է «բոցածին», երկրորդը՝ «բոցեղեն»: Երկրորդի **-այն** վերջածանցի համար հմնտ. **ամենայն, համայն, միանգամայն, սակայն, վաղորդայն** բառերը: «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» մեծարժեք աշխատության հեղինակները **աբեթ**-ը արմատակիցն էին համարում հուն.  $\acute{\alpha}\pi\tau\omega$  «վառել» բառի<sup>18</sup>, բայց մեր բառին ավելի հարագատ է վերջինի հետ համաձայնում  $\acute{\alpha}\varphi\eta$ <sup>19</sup> «այրում» բառը, որովհետև հ.-ե. \*bh- > հայ. **բ**, հուն.  $\varphi$ : Սառցապատման հազարամյակներում դժվար թե մեր նախնիներն հնարավորություն ունենային բոցարձակ աբեթի գյուտն անելու: Այլ էր վիճակը մ.թ.ա. X հազարամյակում սկսված Հալոցքից հետո, երբ Հայկական լեռնաշխարհի կլիման դարձել էր տաք ու խոնավ, իսկ երկիրը՝ հետզհետե պատվել փարթամ բուսականությամբ և ծածկվել անտառներով:

Մ.թ.ա. III հազարամյակի կեսերին Ատրիքում (ներկայիս Սիրիայի տարածքում) կար մի բարգավաճ քաղաք-պետություն՝ Էրլան: Սարգոն Ա քաղաքին նվաճել էր այն, բայց դրա վերջնական կործանումը Աքքադի կողմից տեղի էր ունեցել հետո՝ Սարգոնի թոռ Նարամ-Սուենի օրոք: Էրլայի՝ սեմական լեզվով գրված բազմաթիվ սեպագիր կարճ արձանագրություններ կան: Դրանցից մեկում հիշատակված է Հայկական լեռնաշխարհի բնակիչ «Արմիցիների Ռաշապ աստվածը»<sup>20</sup>: Էրլացիները այդ օտար աստ-

14 Աճառեան Հ., Հայոց անձնանունների բառարան, հատ. III, Եր., 1946, էջ 479:

15 Խորենացի, Ա, ե:

16 ՆՀԲ, հատ. I, էջ 1, ՀԱԲ, հատ. I, Եր., 1971, էջ 74:

17 Մալխասյանց Ստ., Հայերեն բազատրական բառարան (այսուհետ՝ ՀԲԲ), հատ. I, Եր., 1944, էջ 1:

18 Տե՛ս ՆՀԲ, հատ. I, էջ 1:

19 Տե՛ս «Древнегреческо-русский словарь», Составил И. X. Дворецкий, т. I-II, М., 1958, էջ 226, 273: **Աբեթ** < \***աբ-եթ** բառի **-եթ** վերջածանցը լինելու է հին ձևը **-իթ** վերջածանցի առկա **գաւիթ, թիլիթ, կնճիթ, կամիթ, սամիթ, քումիթ** բառերում և **Արուիթ, Բրիթ, Գնիթ, Զուիթ, Մամիթ, Շարիթ/Շամիթ, Սեիթ, Տիրիթ** դիցանվանական ծագումով անձնանուններում: Հայերեն բառի **աբ-եթ** բաղադրիչներից բաղկացած լինելը և հունարեն արմատակից բառն ունենալը հիմք են տալիս հավաստի համարելու Հ. Աճառյանի կարծիքը վրաց. **աբեթի** «աբեթ» բառի հայերենից փոխառյալ լինելու վերաբերյալ (հակառակը տես **Տաիուկյան Ռ.**, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 19):

20 Գарелли П., Замечания по топонимике из архивов Эблы, «Древняя Эбла (Раскопки в Сирии)», М., 1985, с. 284.

ծուն իրենց Ռաշապ աստծո անունով են կոչել նրանց նույնաբնույթ լինելու պատճառով: Իսկ սեմական նախալեզվի ռժբ «բոց» արմատով կազմված անուն կող Ռաշապ աստվածը, կրակի և կայծակի անձնավորում համարվելով, նույնացվում էր միջագետքյան <sup>d</sup>U.GUR ռազմիկ աստծո<sup>21</sup> հետ: Մ.թ.ա. XIV դ. խեթա-հայասական հաշտության պայմանագրում (տեքստը խեթերեն է) <sup>d</sup>U.GUR գաղափարագրով հանդես էր գալիս Հայկական լեռնաշխարհի Հայասա երկրի գլխավոր ամպրոպաբնույթ աստվածը<sup>22</sup>:

Եթե էբլայում <sup>d</sup>U.GUR-ը նույնացվում էր կրակի ու կայծակի անձնավորում տեղական Ռաշապ աստծո հետ, ապա նույնպիսի մոտեցում կարող էր դրսևորված լինել նաև Հայասայում, այսինքն՝ միջագետքյան <sup>d</sup>U.GUR աստծո հետ Հայասայում նույնացված լինել հայասական կրակի ու կայծակի աստվածը: Որ դա հենց այդպես է եղել, բխում է էբլայական մեկ այլ արձանագրությունից: Դրանում Հայկական լեռնաշխարհի Azi և Armi երկրների բնակիչները կոչվում են «Հայայի որդիներ»<sup>23</sup>: Եթե հայկական այս երկրների բնակիչներին էբլացիները կոչում էին «Հայայի որդիներ»//«Հայա աստծո որդիներ», որի համարժեքը **Հայկազուն**-ն է, ուրեմն նույնական են ըմբռնվել **Հայա** և **Հայկ** դիցանունները: Եվ իսկապես, դրանք արմատակից և իմաստակից՝ հ.-ե.\*թə-ijō- նախաձևից ծագած և «հայր» նշանակող անուններ են (այստեղ \*-ijō-ն վերջածանց է): Նույնից է նաև շումերական Էնկի աստծո արքադական **Հայա** (նախապես կարդում էին **Էա, Էյա**) անունը: Սրա «հայր» իմաստի մասին է խոսում անվանակիր աստծո հանրաձանաչ որդու՝ **Դումուզի** (> Թամ-մուզ) անունը, որը «իսկական **որդի**» է նշանակում: Երկու **Հայա** դիցանունների երրորդ արմատակից ու իմաստակից **Հայկ**-ը կազմված է մինևույն նախաձևից **-կ** աձական մասնիկով<sup>24</sup> (հմմտ. բող-կ, լեր-կ, մուր-կ, փեղ-կ և այլն):

21 Տե՛ս Шифман И., Рашап, «Мифы народов мира. Энциклопедия», главный редактор С. А. Токарев, т. II, М., 1988, էջ 373: Իտալացի հնագետ Պ. Մատտին Ռաշապ/Ռաշաֆ աստծուն համարում է ստորերկրյա աշխարհի տիրակալ (տե՛ս Маттін П., Раскопки Эблы 1964-1982 гг: итоги и перспективы, Введение, «Древняя Эбла (Раскопки в Сирии)», М., 1985, էջ 12): Եթե նա նկատի է առել ընդերքային կրակը՝ հրաբուխը, ապա ինչպես Ռաշապին, այնպես էլ <sup>d</sup>U.GUR-ին և նրանց հետ նույնացված Հայա/Հայկին պետք է համարել եռաարկ տիեզերքի բոլոր կրակների անձնավորում աստված:

22 Տե՛ս Դեդրոսեան Ա., Հին հայոց եռամասն ամուսյա խորհուրդը, «Հանդես ամսօրեայ», Վիեննա 1996, N 1-12, էջ 422, 427-429:

23 Տե՛ս Иванов В. В., Выделение разных хронологических слоев в древнеармянском и проблема первоначальной структуры текста гимна Ва(х)аггу, «Հայկազունիներ», Նվիրվում է Հայոց ծորի ձևակառուարտի 4500-ամյակին, Եր., 2013, էջ 451-452: «Հայայի որդիներ» արտահայտությունը արդեն ենթադրում է «հոր» գոյությունը, որը ոչ այլ ոք էր, քան «հայր աստվածը»: Իսկ այդպես մտածվում էին հնդեվրոպական ժողովուրդների գերագույն աստվածները, որոնք կրում էին հ.-ե.\*թə-«հայր» արմատով անուն-մականուններ. հմմտ. պալ. Tijaš papaz, հուն. Ζεὺ πάτερ, իհն հնդկ. Dyáuš pitá, լատին. Iupiter (տե՛ս Гамкрелдзе Т.В., Иванов В.В., Индоевропейский язык и индоевропейцы (այսուհետ՝ ИЯИ), т. II, Тб., 1984, էջ 777):

24 Տե՛ս Петросян С., Племенной союз Хайаса-Аззи в системе двоичных противопоставлений, «Լրաբեր» հաս. գիտ., Եր., 1987, N 3, էջ 83-86: Անեճայն հավանականությամբ, հ.-ե.\*թə-«հայր» արմատով և \*-ijō- վերջածանցով ստեղծված \*թəijō- բառով նախապես կոչվել է վաղհնդեվրոպական հասարակության երկմասնական ցեղի արական-հայրական տոհմը (որից էլ մեր **հայ** ինքնանվանումը)՝ ի հակադրություն իգական-մայրական տոհմի. հմմտ. մանկական թողովանքի **հայի** «հայրիկ» և **մայի** «մայրիկ» բառերը հայերենում և papa, mama համապատասխան բառերը հնդեվրոպական մի շարք լեզուներում: Ընդ որում, հ.-ե.\*թə-ter- (> հայր) և \*mā-ter- (> մայր) բառերում առկա \*ter- (<\*to-ero-) վերջածանցը ևս

Հայա/Հայկ աստծո պաշտամունքի և Արմի երկրի ամնչությամբ ուշագրավ է նաև էբլայական մեկ ուրիշ արձանագրության հետևյալ մասը. «<sup>d</sup>ra-sa-ap ar-mi<sup>ki</sup> ar mi<sup>ki</sup>» // «Ռաշապ աստվածը Արմի երկրի [և] Արմի երկրի»: Իտալացի էբլայագետ Գ. Պետտինատոն արձանագրության այս մասը հասկանում է «Ռաշապ աստվածը քաղաքի (և) քաղաքի», այսինքն՝ «Ռաշապ աստվածը քաղաքների»<sup>25</sup>: Իտալացի մեկ ուրիշ էբլայագետ Պ. Գարելլին, առարկելով նրան, ապացուցում է, որ **Արմի**-ն տեղանուն է<sup>26</sup>: Ըստ այսմ՝ արձանագրության այդ հատվածը հասկանալու ենք այնպես, ինչպես գրված է, այսինքն՝ գոյություն են ունեցել **Արմի** անունով երկու երկրներ, որոնց միավորողը եղել է Հայա/Հայկ աստծո պաշտամունքը:

Հայկ աստծո Ճ խորհրդանշանի առկայությունը Ռուսախինիլիի (Թուփրակկալե) մեհենագրերում<sup>27</sup>, իսկ դրա տարբերակ թեք խաչինը (թեք խաչվող զույգ գծերի՝ X)՝ ուրարտական սրբազան դրոշների ներդիրներին<sup>28</sup>, ենթադրում է, որ Հայկի պաշտամունքը շարունակել է իր հետնորդներն ունենալ նաև ուրարտական դարաշրջանում: Դա հաստատում է Վասպուրականի Անձավ (այժմ՝ Անզաֆ) ավերակ բերդից պեղված ուրարտական վահանի պահպանված բեկորին նրա բոցեղեն-հրեղեն կերպարի պատկերը (նկ. 1)<sup>29</sup>: Վահանին պատկերված աստվածների արշավանքը մի աղեղնավոր աստված է գլխավորում, որի թե՛ մարմնից և թե՛ արձակած ու ձեռքին գտնվող նիզակաչափ նետից բոցի լեզվակներ են ժայթքում: Այս առթիվ նախ նկատենք, որ նա հսկա է, ինչպես



Նկ. 1

Հայկը, և հետիոտն է կռվում, ինչպես Հայկը, ապա հիշենք Վահագն աստծուն ձոնված օրհներգում նրան բնութագրող հետևյալ տողերը. «Ընդ եղեգան փող ծուխ ելանէր. / Ընդ եղեգան փող բոց ելանէր. / Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ. / Նա հուր հեր ունէր»<sup>30</sup>:

«ցույց է տալիս երկու առարկաների հակադրություն» (տես **Անադյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. III, Եր., 1957, էջ 112):

25 Гарелли П., указ. соч., с. 284, стр. 1.

26 Տես նույն տեղում, էջ 284, 295, ժան. 9:

27 Տես **Մարտիրոսյան Հ.**, Գիտությունն սկսվում է նախնադարում, Եր., 1978, էջ 85, 97, աղ. 24 ա:

28 Տես **Հմայակյան Ս.**, Վանի թագավորության պետական կրոնը, Եր., 1990, աղ. 8-11:

29 Տես **Belli Oktay**, Anzaf kaleleri ve Urartu tannarı, Istanbul, 1998, էջ 38-50, **նույնի** The Anzaf fortresses and Gods of Urartu, Istanbul, 1999, էջ 37-47:

30 Խորենացի, Ա, լա:

Առաջադրված տեսակետը, թե սա Ուրարտուի պաշտոնական դիցարանը գլխավորած Խալդի աստվածն է, ձիշտ չէ<sup>31</sup>: Որ սա Խալդին չէ, կարելի է կռահել նաև հետևյալից: Առհասարակ առյուծի վրա պատկերում էին Խալդիին<sup>32</sup>, բայց այստեղ նրա վրա պատկերվածը ամպրոպի աստվածն է (ձեռքերին կայծակի խրձեր են)՝ Թեշեբան, որին ուրարտական արվեստի գործերում պատկերում էին ցլի վրա<sup>33</sup>: Իսկ վահանին պատկերված երթում ցլի վրա ոչ թե Թեշեբան է, այլ արևի աստված Շիվինին, որովհետև պատկերված է արևի թևավոր շրջանակով ու աղեղով: Այսպիսի պատկերացումները խորթ էին Մուծածիրից ներմուծված և Իշպուինիի օրոք (մ.թ.ա. 825-810 թթ.) Ուրարտուի պետական կրոն հռչակված<sup>34</sup> խալդիականությանը: Ուրարտական վահանի՝ Անձավում հայտնաբերված բեկորին Հայկը պատկերված է կրակի և արևի աստծուն (հմմտ. Միհրի հետ) բնորոշ գծերով: Նա ոչ միայն բոցեղեն-հրեղեն է, այլև աղեղնավոր նետածիգ է (առասպելաբանության մեջ՝ «նետ»//«արևի ճառագայթ»): Մեր հեռավոր նախնիների մտապատկերում երկնային կրակը կարող էր ունենալ թե՛ արևային և թե՛ ամպրոպային դրսևորում, հանդես գալ թե՛ որպես արեգակնային ջերմություն ու լույս և թե՛ որպես կայծակ ու նրա լույսը: Այս դեպքում նշենք, որ Հայկի խորհրդանշանը կրկնող նշանը «Նշանագիրք իմաստոց»-ում բերվում է «փայլակն»<sup>35</sup> բացատրությամբ, իսկ այս բառը նշանակում էր ինչպես «ցերեկային արևի լույսը», այնպես էլ «կայծակի ցուրը»<sup>36</sup>:

## 2. Պատմական Հայկի գործունեության պատմաաշխարհագրական միջավայրը

Հայկի մասին մեր հին պատմիչների հաղորդումները հնարավոր են դարձնում դրանց հենքում ուրվագծելու մ.թ.ա. III հազարամյակի կեսերին (XXV կամ XXIV դարերում) ապրած և Միջագետքում բռնակալած Բեյ արքայի դեմ հաղթանակ տարած՝ հարավհայկական երկրներից մեկի ցեղապետ-արքա Հայկի կերպարը: Հին ավանդազրույցներում, տարբեր էթնոսների առձակատման պատմություններում տվյալ երկրի իշխողը սովորա-

31 Տե՛ս **Belli Oktay**, Anzaf kaleleri ve Urartu tanrıları, էջ 38-50:

32 Տե՛ս **Հմայական Ա.**, նշվ. աշխ., էջ 35:

33 Տե՛ս նույն տեղում, էջ 41-42:

34 Տե՛ս **Պետրոսյան Ա.**, Ղասերը և եռադասության դրսևորումները Հին Հայաստանում, ՀՀ ԳԱԱ ՊԻ, «Սեպրոպ արք. Վշձեան» մատենաշար, հատ. 21, Եր., 2006, էջ 198-201, **Մուլնի** Հայոց մեհենագրության ակունքներում, էջ 27-29, **Մուլնի** Մովսես Խորենացին Հայաստանում սեպագրության հայտնվելու ժամանակի մասին, «Վանաձորի պետ. մանկ. ինստիտուտի գիտաժողովի նյութեր», Վանաձոր, 2011, էջ 57-66:

35 Տե՛ս **Աճառյան Հ.**, Հայոց գրերը (Ա. Ցուցակ հայկական հին նշանագրերի), Եր., 1984, N 280, 432, **Արրահայան Ա.**, Հայոց գիր և գրչություն, Եր., 1973, էջ 240, 242:

36 Տե՛ս ՆՀԲ, հատ. II, Եր., 1981, էջ 928:

բար հիշատակվում է իր պաշտած աստծո անունով: Դա բացատրվում է նրանով, որ պատմական այդ անձը որպես գահանուն կամ գահանվան բաղադրիչ կրել է իր աստծո անունը և իր մահվանից հետո նույնացվել է նրա հետ: Օրինակ՝ հայ իրականությունից կարող ենք հիշել մեր Երվանդունի արքայատոհմի թագավորներին, որոնք որպես գահանուն կրում էին հայոց ամպրոպի աստծո **Երուանդ/Արուանդ** անունը, ինչի պատճառով երբեմն նույնացվել են նրանց կերպարները կամ գործունեության որոշակի դրվագներ<sup>37</sup>:

Հայոց հին տոմարի սկզբնավորումը հազարամյակների խորքից եկած ավանդությամբ առնչվում է Բելի դեմ մեր նախնի Հայկի տարած հաղթանակի հետ: Գր. Բրուտյանի կատարած հաշվարկներով՝ «Հայոց բուն Հայկյան (արեգակնային) օրացույցը սկզբնավորվել է ն.Ք. 2341 թ.»<sup>38</sup>: Այս թվականը համընկնում է Բելի պատմական նախատիպը համարված Սարգոն Աքքադացու գահակալության ժամանակաշրջանի հետ (ըստ Վ. Ի. Ավդիևի՝ մ.թ.ա. 2369–2314 թթ., ըստ Ի. Մ. Դյակոնովի՝ մ.թ.ա. 2316–2261 թթ.)<sup>39</sup>: Նկատի առնենք, որ մ.թ.ա. III հազարամյակի համար որևէ դեպքի թվագրումը հավանական է առնվազն  $\pm 50$  տարով: Բելի նախատիպ Սարգոն Աքքադացու հակառակորդ հայոց ցեղապետ–արքան լինելու էր Հայկը: Ինչպես Սարգոնն էր «Հայկ և Բել» ավանդազրույցում հանդես գալիս իր աստծո **Բել** անվամբ (մակդիրով), այնպես էլ պատմական անձնավորյալ Հայկն էր կրում իր աստծո **Հայկ** անունը և **Աբեթածին, Աբեթայն** մակդիրները<sup>40</sup>:

Միջագետքում բռնատիրած Սարգոնն իր թագավորության սահմանը հյուսիսում հասցրել էր մինչև Արծաթի լեռներ՝ Հայկական և Կիլիկյան Տավրոս: Այդուհանդերձ, անգամ իր գրաված էրլայում նա հաստատուն դիրքեր չունեց: Ուրեմն նա չէր կարողացել իր իշխանությունը տարածել Հայկական լեռնաշխարհի հարավային շրջանների վրա, որոնց բնակչության կողմից հակահարված ստանալով՝ նահանջել էր: Դրա մասին է պատմում «Հայկ և Բել» ավանդազրույցը: Դա կարելի է ապացուցել նաև սեպագիր արձանագրության հաղորդած տեղեկությունների վերլուծության մի–

37 Հմտ. **Խորենացի**, Ա, իգ, Ա, իթ, Բ, լե, Բ, իբ: Մեր թագավորները ռազմի դաշտում իրենց ունեցած հաջողությունները կարող էին ուղղակիորեն իրենց պաշտելի աստծուն վերագրել: Հիշենք ուրարտական արձանագրությունների «Խալդին արշավորվեց», «Խալդին գրավեց» արտահայտությունները:

38 **Բրուտյան Գր.**, Օրացույց հայոց, Եր., 1997, էջ 238-246:

39 Տե՛ս **Авдиев В. И.**, История древнего Востока, Л., 1953, էջ 64, **Дьяконов И. М.**, Ранние деспотии в Месопотамии, «История Древнего мира. Ранняя древность», т. I, М., 1989, էջ 73: Սրանց ընդունած «միջին» ժամանակագրությանը մոտ են Մ. Չամչյանցի թվագրումները. Բել-Նեբրովթի համար՝ մ.թ.ա. 2229-2103 թթ., Հայկի համար՝ մ.թ.ա. 2107-2027 թթ. (տե՛ս **Չամչյանց Մ.**, Հայոց պատմություն, հատ. III, Եր., 1984, Աղյուսակ, էջ 22): «Երկար» ժամանակագրությամբ առաջնորդված Ն. Աղոնցը համարում է, որ Սարգոն Աքքադացին գահակալել է մ.թ.ա. 2633-2579 թթ. (տե՛ս **Աղոնց Ն.**, Հայաստանի պատմություն, Եր., 1972, էջ 24-25), իսկ Վ. Ստրուվեն համարում է, որ նրա գործունեությունը սկզբնավորվել է մ.թ.ա. 2720 թ. (տե՛ս **Струве В. В.**, История древнего Востока, Л., 1941, էջ 78):

40 Հայոց նախնի ցեղապետ-արքաների գահանուններում իրենց պաշտելի աստվածների անունների կիրառման մասին տե՛ս **Պետրոսյան Ա.**, Թեոլոգի հայկական մակդիրները գահանուններում, «ԳՊՄ գիտական նստաշրջանի նյութեր», Գյումրի, 2011, էջ 12, 22, **Մույնի** Ամպրոպի աստծու մակդիրները գահանուններում, «ԳՊՄ միջազգային գիտ. նստաշրջանի նյութեր», Վանաձոր, 2012, էջ 3-12:



ջոցով: Դեպի Հայկական լեռնաշխարհ Սարգոնի ձեռնարկած արշավանքի ձախողված լինելու մասին կարելի է կռահել նախ նրա թոռ Նարամ-Սուենի արձանագրություններից: Վերջինս նույնպիսի հաջողությունների հասնելուց հետո (Էբլան կործանել էր) արշավել էր Արևմտյան Տիգրիսի ավազան, նույնիսկ գետանցել էր այն, ինչի վկան Դիարբեքիրից 25 կմ հյուսիս-արևելք ընկած Փիր Հուսեյն գյուղի մոտ նրա թողած բազալտե կոթողն է՝ արձանագրությամբ և իր պատկերաքանդակով<sup>41</sup>: Բայց Հայկական Տավրոսը հաղթահարել նրան չէր հաջողվել: Այդուհանդերձ, գետի աջափնյա շրջանը նա նվաճել էր, որից ելնելով՝ նա իրեն համարում էր ոչ միայն Էբլայի, այլև Արմանում երկրի կործանող: Նա գրում է. «Քանի որ երբևէ՝ մարդկության արարումից ի վեր, ոչ մի թագավոր չէր կործանել Արմանումն ու Էբլան, Ներգալը (իր) գենքով ձանապարհ բացեց Նարամ-Սուենի՝ հզորի համար և տվեց նրան Արմանումն ու Էբլան... Այսպես է ասում Նարամ-Սուենը՝ հզորը, արքան (աշխարհի) չորս կողմերի. «Դագան աստվածը տվեց ինձ Արմանումն ու Էբլան, և ես հաղթեցի Ռիդ/2-Թեշուբին (Ռիդ/2-Ադադին)՝ Արմանումի արքային»<sup>42</sup>: Արձանագրության հենց առաջին տողում Նարամ-Սուենը ակամա խոստովանում է, որ ո՛չ իր պապը՝ Սարգոն Աքքադացին, ո՛չ էլ նրան նախորդած որևէ մեկը Արմանում երկրին չեն հաղթել: Ավելին՝ Նարամ-Սուենը Էբլայի թագավորի անունը չի նշում, թեև նրա՝ Իբբի-Ջիբիրի թագավորությունն իրոք կործանել էր, իսկ Արմանումի արքային կոչում է իր գահանունով՝ **Ռիդ/2-Ադադ** (Ռիդ/2 Թեշուբ): Բացի դրանից՝ Նարամ-Սուենը պարտության մատնած երկու թագավորություններից առաջինը հիշատակում է Արմանումի անունը, որով նրան հաղթելու հանգամանքն ավելի է կարևորել, քան Էբլան կործանելը: Պատճառը, ըստ երևույթին, այն է, որ այս դեպքում նա շեշտել է Արմանումի արքայից իր պապ Սարգոնի կրած պարտության վրեժը լուծելու հանգամանքը: Արմանումի արքայի գահանվան երկրորդ բաղադրիչը՝ IM գաղափարագիրն է, որը արքադացի դպիրները **Ադադ** էին կարդում, իսկ խեթ և խուռի դպիրները՝ **Թեշուբ**: Սրանց նման ամպրոպաբնույթ աստված էր լինելու նաև Արմանումի գլխավոր աստվածը<sup>43</sup>:

Խեթական թագավոր Խաթուսիլի I-ը (մ.թ.ա. 1620-1590 թթ.), իր տարեգրության մեջ երկիցս անդրադառնալով մեր լեռնաշխարհի Հասուվա (Տարոն) և Խախա (Բզնունիք) երկրների համանուն կենտրոնատեղիների նվաճմանը, գրում է. «Ճի՛շտ է, Սարգոնը նույնպես անցել էր ժամանակին այն (իմա՛ Եփրատ գետը - Ս. Պ.): Նա հաղթել էր Խախա երկրի զորքին,

41 Տե՛ս **Авдиев В. И.**, նշվ. աշխ., էջ 68, **Մովսիսյան Ա.**, Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների), Եր., 2005, էջ 70:

42 **Մովսիսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 151-152:

43 Նույն գաղափարագիրը Ուրարտուի պաշտոնական դիցարանում հատկացված էր սրանց համարժեք Թեյշեբ ամպրոպաբնույթ աստծուն (տե՛ս **Հմայակյան Ս.**, Վանի թագավորության պետական կրոնը, Եր., 1990, էջ 41-42):

[սակայն] Խախա քաղաքին ոչինչ չէր արել և այն չէր հրդեհել ու ծուխն այդ քաղաքների մինչև երկնային Ամպրոպի աստված չէր հանել, իսկ ես՝ մեծ արքա Տաբարնաս, ոչնչացրի Հասուվա և Խախա քաղաքները, և ես դրանք հրդեհեցի և դրանց ծուխը հանեցի երկնային Ամպրոպի աստված»<sup>44</sup>: Ի միջի այլոց, երկու քաղաքներն էլ գոյատևել են հետագայում ևս: Խաթուսիլի I-ի տարեգրության այս հատվածի առթիվ հայտնի խեթագետ և հնդեվրոպարան Վ. Վ. Իվանովը գրում է. «Եփրատը (խեթ. Մալա կամ Պուրանա, աքադ. Պուրատտու) անցած Սարգոն Աքքադացու հիշատակումը Խաթուսիլի I-ի տարեգրության տեքստում՝ ավելի քան 6 դար առաջ եղած, քան Խաթուսիլի I-ը, բավականին հետաքրքրահարույց է խեթական պատմագրական կապերը Հին Միջագետքի հետ բացահայտելու համար»<sup>45</sup>:

Մար Աբասի «Պատմութիւն» երկից օգտված Մովսես Խորենացու և Անանուն պատմիչի հաղորդումներից պարզվում է, որ մինչև Հարքում հաստատվելը Հայկը տիրոյթ է ունեցել և իր տոհմակիցներով բնակվել է «**Արարադայ**» երկրում: Կարծում ենք, որ այս երկրանունը կապ չունի Կորդուքի Արարատ (Ջուդի) լեռան կամ Այրարատի հետ, որովհետև դրա հասցեատերը Ուրարտուն է: Ինչպես հայտնի է, վաղ քրիստոնեության շրջանի քրիստոնյա մատենագիրները ամեն կերպ փորձում էին տարբեր ժողովուրդների ազգային ավանդություններում հիշատակված դեմքերի ու վայրերի անունները կապել աստվածաշնչյան (Հին Կտակարանի) այս կամ այն անձնավորության կամ վայրի հետ: Այդ կերպ է Մասիսի անվանադիր Մարայակը (<\* Մասեակ) նույնացվել Աբրահամ նահապետի հարձի հետ<sup>46</sup>, Սիմ լեռան անվանադիր կերպարը՝ Նոյի Սեմ որդու, Տարոնի անվանադիր Տարբանը՝ Սեմի որդու և այլն<sup>47</sup>: Նույն կերպ Աստվածաշնչի **Արարատ** (երբայ. 'RRṯ//Ararat > հուն. ' Ἀραράθ) անունն է նույնացվել Հայկական լեռնաշխարհի ծայր հարավում Ատրեստանի թագավոր Աշուրնասիրապալ II-ի (մ.թ.ա. 883-859 թթ.) հիշատակած Arardi լեռնանվան հետ<sup>48</sup>: Այդ պատճառով Ջուդի լեռը առանձին ասորի մատենագիրներ և նրանց երկերից օգտված հայ հեղինակներ կոչել են **Արարադ/Արարատ**:

Վաղ քրիստոնեության շրջանի մատենագիրները այս անունն են տվել նաև Արևմտյան Տիգրիսի հովտին, երբ այն **Ուրարտու** (սեպագր. Urartu) անվան եբրայական տարբերակն է. հմմտ. Urartu//Ararat, Uruk//Arak, Urbilum//Arbela: Աստվածաշնչի **Արարատ/Արմենիա** (հուն. թարգ.) համապատասխանությամբ ծանոթ դպիրները **Արմենիա** են տեսել թե՛ Արևմտյան

44 **Иванов В. В.**, Летопись Хаттусилиса I, «Хрестоматия по истории древнего Востока», часть I, М., 1980, с. 265.

45 Նոյն տեղում, էջ 266, ծան. 13:

46 Տե՛ս **Անանուն** (Սերբոս), Ա, էջ 7:

47 Տե՛ս **Խորենացի**, Ա, գ:

48 Տե՛ս **Дьяконов И. М.**, Ассиро-вавилонские источники об истории Урарту, «Вестник древней истории», 1951, N 2, 3, 4, надп. № 23:

Տիգրիսից հյուսիս ընկած և Ուրարտուի արքա Սարգուրի II-ի հիշատակած **Արմե** երկրի<sup>49</sup> և թե՛ գետից հարավ Նարան-Սուենի ժամանակներից հայտնի **Արմանում** (Arman-um-ը՝ ուղղական հոլովում աքքադերենի վերջավորությամբ) երկրի անուններում և դրանց դիմաց դրել են իրենց քաջ հայտնի **Արարատ**-ը, որն էլ Մար Աբասի միջոցով փոխանցվել է մեր պատմիչներին: Ի դեպ, էբլայական «Արմի (երկիրը) և Արմի (երկիրը)» (արձանագրության մեջ հենց այս բառակապակցության տեսքով է նշված – Ս. Պ.)<sup>50</sup>: **Արմի**-ներից մեկը վերաբերելու էր գետից հյուսիս ընկած Arme-ին, իսկ մյուսը՝ գետից հարավ ընկած Arman (-um)-ին, որոնք երկմիասնական կառուցվածքով վաղպետական կազմավորման երկու մասերն են եղել: Դրանք հավանաբար միասնության մեջ են դիտվել և երբեմն մեկ **Արմի** երկիր համարվել, թեպետև դրանց անվանումների **արմ**-երը հավանաբար տարբեր ծագում են ունեցել<sup>51</sup>:

Նախնադարյան ցեղի երկմիասնական կառուցվածքը կարող էր հենքը լինել մեկ Armi անվամբ երկու Armi-ների գոյության: Ընդ որում, ինչպես բազմիցս ապացուցվել է, արտամունության պատճառով ցեղը կազմած տոհմերից մեկը համարվում էր արական-հայրական, իսկ մյուսը՝ իգական-մայրական: Հայկական լեռնաշխարհում սովորաբար քոչի (քաղի, նոխագի, արու այծի) տոտեմի կրողը արական-հայրական տոհմն էր, իսկ օձինը՝ իգական-մայրականը: Հայկի «թոռ» Կադմուսի՝ «օձ» տոտեմին պատկանելու մասին է խոսում ինչպես իր անվան ստուգաբանությունը, այնպես էլ իր անվանակից հունական Կադմուսի «օձային» բնույթը<sup>52</sup>: Կադմուսի անունն էր կրում երկմիասնական Armi-ներից հարավայինը՝ հայկական ավանդություններում կոչված «**Կադմեայ տուն**» (կամ Միջագետք Հայոց)<sup>53</sup>, իսկ Ասորեստանի արձանագրություններում՝ «Kadmuh»<sup>54</sup>: Armi-ներից հյուսիսայինը եղել է Հայկի և նրա տոհմի բուն տիրույթը, իսկ նրանց տոտեմը արու այծն էր: Սրա անունն էր կրում Հայկի ոստանը, որի հիշատակն են պահել Արևմտյան Տիգրիսից հյուսիս ընկած հետագա Մեն Հայքի Աղձնիք աշխար-

49 Տե՛ս **Меликишвили Г.А.**, Урартские клинообразные надписи, М., 1960, էջ 420, надп. N 156 D I-II, **Пиотровский Б. Б.**, Ванское царство (Урарту), М., 1960, էջ 76:

50 Տե՛ս **Гарелин П.**, նշվ. աշխ., էջ 285:

51 Այդ մասին տե՛ս **Պետրոսյան Ա.**, Արամայակի որդիները և նրանց տիրույթները եռադասության տեսանկյունից, ՀՀ ԳԱԱ ԵՀԿԿ «Գիտական աշխատություններ», հատ. XIII, եր., 2010, էջ 27-28, **Ույնի** «Արմենոսի առասպելի» և Արամայակի ավանդագրույցի պատմական հենքը, «ՎԷՄ», եր., 2018, N 3, էջ 49-50:

52 Տե՛ս **Պետրոսյան Ա.**, Արամայակի որդիները և նրանց տիրույթները եռադասության տեսանկյունից, էջ 24-28, **Կուն Ն.**, Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները, եր., 1956, էջ 170-176: Հայաստանում օձի պաշտամունքի և նրա որպես մայրնի ըմբռնվելու վերաբերյալ տես **Սրվանդության Գ.**, Երկեր, հատ. I, եր., 1978, էջ 48, **Լալայան Ե.**, Երկեր, հատ. II, եր., 1988, էջ 170-171, **Աբեղյան Ա.**, նշվ. աշխ., հատ. I, էջ 136, **Ույնի** հատ. VII, եր., 1975, էջ 64-65, **Պետրոսյան Ա.**, **Պետրոսյան Լ.**, Շիրակում և Վանանդում օձի և օձամանուկի պաշտամունքի շուրջ, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», հատ. XIX, Գյումրի, 2016, էջ 151-159:

53 Տե՛ս **Խորենացի**, Ա, Ժ-Ժբ, **Անանուն** (Սեբեոս), Ա, էջ 3-5, **Երեմյան Ա.**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, եր., 1963, էջ 71, 118:

54 Տե՛ս **Խաչատրյան Աստ.**, Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմություն, եր., 1933, էջ 33, օճան. 2: Տե՛ս նաև **Капанян Г.**, Историко-лингвистические работы к начальной истории армян, Ер., 1956, էջ 256:

հի **Քաղ** գավառը և Արևմտյան Տիգրիսի հյուսիսային (ձախակողմյան) մեծ վտակ **Քաղիթթ** գետը<sup>55</sup>: Թե՛ գետանվան, թե՛ գավառանվան հիմքում հայերեն **քաղ** «արու այծ» բառն է:

Ըստ Մովսես Խորենացու և Անանուն պատմիչի (Սեբեոս)՝ Կադմոսին Արևմտյան Տիգրիսից հարավ ընկած իր կավածքը Հայկն էր նվիրել: Բայց դա լինելու էր Կադմոսի տոհմի ժառանգական տիրույթը՝ որպես երկմիասնական ցեղի իգական-մայրական տոհմի տիրույթ: Մար Աբասը ծանոթ չէր (և չէր կարող լինել) հնագույն ցեղի կառուցվածքին, ուստի իր ժամանակի ոգով, ելնելով արական գծով ժառանգելու իրավունքից, Կադմոսին համարել է Հայկի թոռը և Արամանյակի որդին, իսկ «Կադմեայ տունը»՝ իր Հայկ պապից ստացած պարգև<sup>56</sup>: Խորենացին և Անանունը հետևել են նրան:

Էրլայագետ Պ. Գարելլին հնարավոր էր համարում Նարամ-Սուենի արձանագրությունների Ar-ma-nam<sup>ki</sup> և Eb-la<sup>ki</sup>/Ar-ma-nim<sup>ki</sup> և Eb-la<sup>ki</sup> բառակապակցությունների համադրումը էրլայական «Eb-la<sup>ki</sup> wa Ar-mi<sup>ki</sup>» // «Էրլա (երկիր) և Արմի (երկիր)» կապակցության հետ<sup>57</sup>: Էրլայի կործանումից հետո Arman(-um)-ի դեմ Նարամ-Սուենի ձեռնարկած արշավանքը խոսում է այն մասին, որ վերջինս իրոք եղել է Էրլայի դաշնակիցը և որպես այդպիսին նույնանում է Armi-ի հետ: Էրլայի և Armi-ի դաշինքը կարող էր ձևավորված լինել դեռևս Հայկի կենդանության ժամանակ, երբ Հայկազանց ցեղամիությունն իր վերելքի շրջանում էր:

Ամբողջ Միջագետքն իր իշխանության տակ միավորած Սարգոն Աքքադացին, անտարակույս, ձգտելու էր տիրանալու նաև Հայկի ոստանին: Վտանգավոր հարևանի հանկարծակի ներխուժումից զգուշանալով՝ Հայկն իր նստավայրը փոխադրեց Հայկական լեռնաշխարհի խորքում (Վանա լճից հյուսիս) գտնվող Հարթ<sup>58</sup>: Իր նախկին ոստանի (Քաղ-Քաղիթթով) պաշտպանությունը նա հանձնել էր Կադմոսին: Այս մասին հաղորդմանը Պատմահայրն ավելացնում է. «Յիշի և աստանոր ի Պատմութեանս՝ ի հարառոյ կողմանէ դաշտիս այսորիկ. առ երկայնանստիվ միով լերամբ բնակեալ յառաջագոյն արք սակաք, ինքնական հնազանդեալ դիւցազինն: Արդարացուցանէ և զայս զասացեալ զրոյցս անգիրս»<sup>59</sup>: Անանուն մնացած դաշտը Տարոնն էր, որն ուղղակի **Պաշտ** էլ էր կոչվում, իսկ երկայնանիստ լեռը Միւն էր, որն ուղղակի **Լեռ** էլ էր կոչվում: Սրանցից Միւն/Լեռը Սասուն-Խորթ լեռնաստանն էր, «որ բաժանէ ընդ Աղձնիս և ընդ Տարօն», և որի բնակիչները կոչվում էին «բնակիչք լերինն»՝ ի հակադրություն տա-

55 Տե՛ս **Երեմյան Ա.**, նշվ. աշխ., էջ 89 և քարտեզը:  
56 Տե՛ս **Խորենացի**, Ա, Ժ, **Անանուն** (Սեբեոս), Ա, էջ 3:  
57 Տե՛ս **Гарелло П.**, նշվ. աշխ., էջ 285:  
58 Տե՛ս **Անանուն** (Սեբեոս), Ա, էջ 3:  
59 **Խորենացի**, Ա, Ժ:

րոնցիների, որոնք կոչվում էին «դաշտայինք»<sup>60</sup>: Վերջիններս Հայկի դաշտակիցները լինելով էին կամովին հնազանդվել նրան: Ըստ ամենայնի, Հայկը նպատակ է ունեցել ստեղծելու հայախոս ցեղերի մի ընդարձակ միություն՝ միջագետքյան վտանգին դեմ հանդիման: Հարք կենտրոնով Հայկազանց միության մեջ Բելի բանակի ներխուժումից առաջ մտնում էին նաև հետագա Ապահունիքն ու Բզունիքը, Տարոնն ու Սասուն-Խուրթ լեռնաստանը և Արևմտյան Տիգրիսի հովիտը (հետագա «Կաղմեայ տունը» ներառյալ)<sup>61</sup>:

### 3. Պատերազմը և դրա հետևանքները

Փախուստի դիմած Կաղմուսի միջոցով Բելի բանակի ներխուժման լուրն առնելով՝ Հայկը «Հաւաքէ զորդիս իւր և զթոռոնսս, արս քաջս և աղեղնաւորս՝ թուով յոյժ նուազունսս, և զայլս ևս, որ ընդ իւրով ձեռամբ»<sup>62</sup>: Վերջինները լինելու էին նորաստեղծ ցեղամիության մյուս անդամների տրամադրած ուժերը: Հայկն սկզբում պաշտպանողական մարտեր է վարել՝ հարկ եղած դեպքում խուսափելով բախումից կամ նահանջելով: Վճռական ճակատամարտը տեղի է ունեցել Վանա լճից հարավ-արևելք ընկած Հայոց ձորում:

Ի՞նչ ճանապարհներով էին Հայկն ու Բելը հասել Հայոց ձոր: Ինչպես տեսանք, Բելը նվաճել էր Արևմտյան Տիգրիսի հովիտը, որտեղից էլ իր բանակով անցել էր Արևելյան Տիգրիսի հովիտ: Սրա հոսանքն ի վեր ընթանալով՝ նա իր բանակով հասել էր այդ գետի ակունքների շրջան, որին կից էր Հայոց ձոր (Խոշաք) գետի ակունքների շրջանը<sup>63</sup>: Շտապողականություն ցուցաբերելով՝ Բելը, հետևում թողնելով իր բանակի մեծ մասը, թիկնազորով մտել էր Հայոց ձորի գետահովիտ: Ըստ երևույթին, նա մտադրվել էր իջնել Վանա լճի արևելյան ափ (Հայոց ձոր գետը լիճն էր թափվում լճի հարավ-արևելքում), ապա՝ Հայկի համար անսպասելի թիկունքից ներխուժել Հարք: Պատմահայրը գրում է. «Իսկ Բելն, յանդուգն և անձոռնի զորութեամբ ամբոխին, որպէս յորձան ինչ սաստիկ ընդ զառ ի վայր հեղեղեալ՝ փութայր հասանել ի սահմանս բնակութեանս Հայկայ. . . .»<sup>64</sup>:

Մեր կարծիքով՝ Հայկը ևս հանկարծակիի է բերել Բելին և կտրել նրա ճանապարհը հենց Հայոց ձորում: Դրանով նա թույլ չի տվել իր թշնամուն

60 Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, Եր., 1985, Բ, գ, է, Հակոբյան Թ., Մելիք-Բախչյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատ. II, Եր., 1988, էջ 30:

61 Հնձնտ. այս նույն տարածքում Հ. Մամանյանի, ապա և Ս. Պետրոսյանի նշած Հայք/հայ/Հայաստ անջնջությունները (տե՛ս Манабян Я., О некоторых спорных проблемах истории и географии древней Армении, Ер., 1956, էջ 112-117, 145-146, Петросян С., Племенной союз Хайаса-Аззи в системе двойных противопоставлений, с. 79-80, 83-84, 86-87).

62 Խորենացի, Ա, Ժա:

63 Տե՛ս Երեմյան Ա., նշվ. Աշխ., էջ 62 և քարտեզը:

64 Խորենացի, Ա, Ժա:

գետահովտից դուրս գալ ավելի ընդարձակ տարածություն և համախմբել իր ամբողջ զորքը: Ըստ երևույթին, Հայկը յուրայիններով Հայոց ձոր էր հասել՝ Հարքից Վանա լճով դուրս գալով դրա հարավարևելյան ափ: Դա պարզվում է մեր Պատմահոր հետևյալ տողերից. Հայկը «հասանէ յեզր ծովակի միոյ, որոյ աղի են ջուրքն, մանունս ունելով յինքեան ձկունս»<sup>65</sup>: Եթե ոչ Վանա լճով Հայոց ձոր հասնելով, ապա ուրիշ ինչպե՞ս կարելի է բացատրել Հայկի արշավուղու առնչությամբ Վանա լճի հիշատակումը: Ամենայն հավանականությամբ, Բզնունիքից նավակներով լճի հարավարևելյան ափ հասնելով, Հայկը և յուրայինները «Եւ յառաջ կոյս անցեալ բովանդակ ասպարէզս հասանեն ի միջոց ինչ դաշտաձև՝ լերանց բարձրգունից: Եւ յաջմէ ջուրց հոսանաց ի բարձրավանդակում կուռ կալով ի տեղուջ, ի վեր զերեսս ամբարձեալ՝ երևեցաւ նոցա բազմութիւն անկարգ հրոսակի ամբոխոյն Բելայ»<sup>66</sup>: Հայկի մտադրությունը՝ ճակատամարտ տալու հենց Հայոց ձորում, հիմնավորված էր ինչպես տեղանքի նպաստավոր դիրքով, այնպես էլ նրանով, որ «Բէլ առաջի ամբոխի եկեալ հասեալ ընտրիւք և վառելովք ոմամքք. և երկար միջոց ճանապարհի ընդ նա և ընդ ամբոխն»<sup>67</sup> կար<sup>68</sup>:

Ճակատամարտն սկսվում է: Երբ կռվողները հետզհետե մոլեգնում են, Միջագետքի բռնակալ արքան «զարհուրեցաւ, և ի նոյն բլուրն ուստի էջն՝ վերջոտնեալ ելանէր. քանզի խորհէր ի միջոցի ամբոխին ամրանալ, մինչև հասցէ բովանդակ զօրն, զի միւս անգամ ճակատ յորինեսցէ»<sup>69</sup>: Բլուրն ի վեր ետնաքայլ նահանջող աքքադացի քաջամարտիկները թիրախ են դարձել Հայկի և նրա նետաձիգների համար: Ճիշտ է, Բելը չի սպանվել (դա վիպական մոտիվ է), բայց մեր աղեղնավորների լայնալիճ աղեղների թևավոր նետերից և սրերից ընկել են Բելի թիկնազորը կազմած բազմաթիվ աքքադացի զինվորներ: Նրանց թաղման վայրը, ինչպես Մովսես Խորենացին է տեղեկացել և վկայում, հնում կոչվել է **Գերեզմանք**, իսկ իր ժամանակ՝ **Գերեզմանակք**, «Բայց գտեղի ճակատուն շինէ (Հայկ) դաստակերտ և անուն կոչէ Հայք՝ վասն յաղթութեան պատերազմին»<sup>70</sup>: Հաղթանակը կատարյալ էր: Որ այն իսկապես եղել է, վկայում են նաև հետագա իրադարձությունները: Հայոց ձորի ճակատամարտում Հայկի տարած հաղ-

65 Նույն տեղում:

66 Նույն տեղում:

67 Նույն տեղում:

68 Սհա թե ինչպես է ներկայանում Հայոց ձորը ականատեսին. «Վան-Տոսպից դեպի հարավ երկշարք բլուրների և լեռների մեջ, ավելի քան 30 վերստ տարածության վրա ձգվում է մի գեղեցիկ ձոր. այդ ձորը մի քանի տեղերում լայնանում է, այնքան լայնանում, որ կորցնելով ձորի տեսքը փոխարկվում է դաշտի. ավելի շուտ դա մի երկարուկ հովիտ է կամ հովիտների մի շարք, որոնց առատորեն ոռոգելով, ոլորապտոյտ գնում է թափվում է ծովախորշը Խոշաբ գետը... Սհա այս հովիտների վրա և նրա պատնեջ կազմող լեռների և բլուրների լանջերում ընկած է Վասպուրականի բարեբեր գավառներից մեկը՝ Հայոց ձորը» (**Ա-Ղ**, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Եր., 1912, էջ 45):

69 **Խորենացի**, Ա, ժա:

70 Նույն տեղում:

թանակը ավանդաբար թվագրվում է մ.թ.ա. 2492 թվականով: Մ.թ.ա. III հազարամյակի կեսերը մոտավոր թվագրում համարելով՝ փորձենք հիմնավորել այն<sup>71</sup>:

**Ա.** Հայկի նետի նկարագրությունից պարզ է դառնում, որ այն բրոնզե տեգ (ծայրակալ) է ունեցել, ուստի կարողացել է ծակել Բելի (իրականում յուրաքանչյուր արքադացի զինվորի) պղնձե լանջապանակը<sup>72</sup>: Մ.թ.ա. III հազարամյակի կեսին Հարավային Միջագետքում զինվորի թաղիքե հանդերձանքը պատող վահանակները պղնձյա<sup>73</sup> էին, իսկ Հայկական լեռնաշխարհում շատ ավելի վաղ ժամանակներից զինվորի զենքերն ու զրահները բրոնզից էին:

**Բ.** Բելը զինված էր երկար նիզակով, որը ձեռքին պահվող կամ մոտիկ նետումի խոցող զենք էր, իսկ Հայկի զենքը նետաղեղն էր: Տարբեր էին դրանց հեռահար հնարավորությունները: Նաև նետումի համար նախատեսված կարճ նիզակինը 30-40 մ էր, իսկ նետաղեղինը՝ 80-100 մ<sup>74</sup>: Ընդ որում, Սարգոնն ու նրա հետնորդները Սուբարտուի գործը բնութագրում էին «հեռու նետարձակ»<sup>75</sup> արտահայտությամբ, իսկ **Սուբարտու** անվան տակ միավորում էին Հյուսիսային Միջագետքի և Հայկական լեռնաշխարհի հարակից շրջանները:

Մ.թ.ա. III հազարամյակի կեսին Հարավային Միջագետքի (Շումեր-Աքքադ) բանակները ոչ միայն կառավարողներ և հեծյալներ, այլև աղեղնավոր-նետաձիգ զինվորներ չունեին: Վիճակը փոխվել էր Սարգոն Աքքադացու օրոք, երբ, ըստ Ի. Մ. Դյակոնովի, կա՛մ ձկուն բնափայտով ծառերից զուրկ Հարավային Միջագետքի թագավորը նվաճումներով հասել էր նման ծառատեսակներ ունեցող Փոքր Ասիայի կամ Իրանի նախալեռներին, կա՛մ նրա օրոք էր ստեղծվել բաղադրյալ աղեղը, որը բաղկացած էր սուսնձվող եղջյուրից, փայտից և ջիղից, ինչն էլ հնարավորություն էր տվել Սարգոնին ունենալու աղեղնավոր-նետաձիգ մարտիկներից բաղկացած զորամաս<sup>76</sup>: Բաղադրյալ աղեղն ավելի ուշ է ստեղծվել: Սարգոնի աղեղ-

71 Այդ թվականին հանգել են՝ ելակետ ունենալով 428 թ. նավասարդի 1-ը (համընկնում էր օգոստոսի 11-ին), որը համարվել է Բելի դեմ Հայկի տարած հաղթանակի օրը: Դրանից «Հայկայ շրջանով» երկու պարբերաշրջան ետ գնալով (1460+1460) և հանելով 428-ը՝ ստացել են մ.թ.ա. 2492 թ. (տես **Վիշան Ղ.**, Յուշիկե հայրենեաց հայոց, հատ. Ա, Վենետիկ, 1869, էջ 95, **Բաղայան Հ.**, Օրացույցի պատմություն, Եր., 1970, էջ 50, 52 և ծան. 8, **Աղայան Է.**, Ավանդներ հայոց տոմարների պատմության, Եր., 1986, էջ 26-29, 40-41): Վիպական Հայկի պատմական (անձնավորյալ) նախատիպի վերաբերյալ եղած տարբեր մոտեցումների մասին տես **Պետրոսյան Ս.**, Խեթական արքա Սուալիլուիումա I-ի կնիքի և հայկական երկնային խորհրդանշանների ընդհանրությունները, «Վեմ», Եր., 2020, N 1, էջ 30-31, **Խաչատրյան Վ.**, Հայկ նահապետը որպես պատմական անձ, «Հայկագուհիներ», էջ 123-127, **Սիմոնյան Հ.**, «Հայկ և Բել»՝ առասպել, ա՛նք, թե՛ իրապատում, «Հայկագուհիներ», էջ 97-105, **Խնկիկյան Օ.**, Հայոց ցեղատրության հարցի շուրջը, «Հայկագուհիներ», էջ 110, **Մարտիրոսյան Ս.**, Հայոց ռազմատեսական մտքի ծագումն ըստ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» «Հայկ և Բել» վիպասքի, «Հայկական լեռնաշխարհը հայոց և համաշխարհային քաղաքակրթության բնօրրան», ՀՀ ԳԱԱ ՊԻ, Եր., 2004, էջ 151-157:

72 Տես **Խորենացի**, Ա, ժա:

73 Տես **Дьяконов И. М.**, Города государства Шумера, «История древнего мира. Ранняя древность», т. I, М., 1989, էջ 70:

74 Տես **Матюшин Г. А.**, У колыбели истории, М., 1972, էջ 151:

75 Տես **Խաչատրյան Աստ.**, նշվ. աշխ., էջ 77:

76 Տես **Дьяконов И. М.**, Ранние деспотии в Месопотамии, «История древнего мира. Ранняя древность», т. I, էջ 74:

նավորը այն չի ունեցել և չէր կարող ունենալ: Դրանով բացառվում է Դյակոնովի նշած հնարավորություններից երկրորդը: Իսկ առաջինը կարող էր իրականացված լինել այն բանից հետո, երբ Միջագետքի բռնակալը հանդիպել էր Հայկի ու հայկազուն աղեղնավոր մարտիկների դիմադրությանը և նահանջել:

**Գ.** Հայկի նետը երեթթայան էր, այսինքն՝ կոթին ամրացված էին երեք փետուրներ, որոնք, ինչպես Խ. Սամուելյանն է նշում, նետին տալիս էին «հորիզոնական ուղղությամբ սրընթաց ու ազատ ճախրելու ընդունակություն»<sup>77</sup>, իսկ աղեղը լայնալիճ էր<sup>78</sup>: Վերջինի գոյությունը հաստատվում է Ախթալայից և Նոր Բայազետից (Գավառ) պեղված բրոնզե գոտիների պատկերների և Գեղամա լեռների այն ժայռապատկերների միջոցով, որոնցում աղեղները մարդահասակից բարձր են, ունեն մոտ 2 մ երկարություն<sup>79</sup>:

Հայկի ոստանի **Հարք** անունը մեր պատմիչները համարել են **հայր** բառի հոգնակի ձևը՝ **հարք**: Եթե այդպես լիներ, սեռական հոլովում այն կունենար ոչ թե **Հարքայ**, այլ **հարց/հարանց** ձևը<sup>80</sup>, իսկ **հարքացի** ձևի փոխարեն կունենայինք **\*հարացի** ձևը (հմմտ. **Մոկք** > **մոկացի**, **Տայք** > **տայեցի**, **Սիւնիք** > **սիւնեցի** և այլն, որոնցում հոգնակիակերտ-տեղանվանակերտ **-ք**-ն բացակայում է): **Հարքայ** և **հարքացի** ձևերը իրենց **-ք**-ով ենթադրում են տեղանվան **\*Հարք-ք** նախաձևը, որում երկրորդ **-ք**-ն է եղել հոգնակիակերտ-տեղանվանակերտը: **\*Հարքք** նախաձևի երբեմնի գոյության վկան է տեղանվան հունալատին Archene < Arch-ene տարբերակը (հռոմեական «Պևտինգերյան քարտեզ»-ում այն Հարքում գտնված ուղեկայաններից մեկի անունն էր<sup>81</sup>): Հունալատին Arch-//հուն. Αρχ-ին համապատասխանում է մեր տեղանվան **Հարք**- հիմքը, իսկ **-ene** տեղանվանակերտ վերջածանցին՝ մերի երկրորդ **-ք**-ն:

Վերականգնված **\*Հարք-ք** նախաձևի հիմքային **\*Հարք**-ը (ստորին ձայնդարձով), պետք է տարբերակը լինի **հերքել** (վերին ձայնդարձով) բառի արմատական **հերք** բաղադրիչի: **Հերք** նշանակում է «վանելը, վռնդելը, դուրս անելը, հաղթահարելը», իսկ **հերքել**՝ «գորել, դեմ կենալ, տոկալ»<sup>82</sup>: **Հերք**-ը ծագում է հ. -ե. \*per- «հարվածել, խփել» արմատից հ. -ե. -k<sup>3</sup>- կամ -k- աճականով, որոնց հայերենում համապատասխանում է **ք**-ն<sup>83</sup>: Այս ար-

77 Սամուելյան Խ., Հին Հայաստանի կոլտուրան, հատ. II, Եր., 1941, էջ 69-70:

78 Տե՛ս Խորենացի, Ա, Ժա:

79 Տե՛ս Սամուելյան Խ., նշվ. Աշխ., էջ 68, Մարտիրոսյան Հ., Գիտությունն սկսվում է նախնադարում, էջ 165, աղ. XXX գ. նկ. 6:

80 Տե՛ս Չարազաշեան Ա., Բնական պատմություն Հայոց, Թիֆլիս, 1895, էջ 146:

81 Տե՛ս Մանանդյան Հ., Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պևտինգերյան քարտեզի, Եր., 1936, էջ 109-112:

82 ՀԱԲ, հատ. III, Եր., 1977, էջ 89:

83 Տե՛ս Զահուկյան Գ., Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Եր., 1970, էջ 50, 107: Հմմտ. Գույնի՝ Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 459:



մատի \*pər-/\*př- ձայնդարձից ունենք **հար**՝ որպես արմատակիցը հին հնդկ. pṛtanā «կռիվ», ալբ. pres «կացնահարել, կացինով կտրել, ջարդել», հին սլավ. sǫporŭ «կռիվ» բառերի և մի շարք դիցանունների, որոնցից են՝ հին հնդկ. Parjanya «Անձրևաբեր աստվածը», լիտվ. Perkunas, հին ռուս. Перун «Որոտի աստվածը» և այլն<sup>84</sup>: Սրանց շարքին է դասվում նաև **Երուանդ/Արուանդ** արքայանունը, որը նախապես եղել է Երվանդունի/Երվանդյան արքայատոհմի հովանավոր ամպրոպի աստծո անունը<sup>85</sup>: Ուշագրավ է մանավանդ **հար** արմատի (որից ունենք նաև **հարուած, հարկանել** և այլն)<sup>86</sup> «նետ արձակել» նշանակությունը<sup>87</sup>, որովհետև Բելի գործի դեմ **աղեղնավոր** Հայկը հաղթանակ էր տարել՝ իր հետ ունենալով «արս քաջս և աղեղնաուորս»: Սրանք են եղել բռնակալին և նրա զորքին հերքողները, հարկանողները և վանողները, որոնց պատվին էլ Հայկի նոր ոստանը կոչվել է **\*Հարքք > Հարք**:

#### 4. Պետականաշինության ասպարեզում Հայկի իրականացրած բարեփոխումները

Պատմական Հայկի բարեփոխումներից, ամենայն հավանականությամբ, կարևորագույնը գահաժառանգման ընդունված կարգի վերափոխումն էր: Ինչպես մինչ այդ, այնպես էլ դրանից հետո Հայկական լեռնաշխարհի առանձին երկրներում ընդունված էր իգական ժառանգման կարգը, թեպետև գահակալը արական սեռի ներկայացուցիչ էր: Խեթ թագավոր Խաթուսիլի I-ի վկայությամբ՝ «Հասուվա երկրին (իմա՝ Տարոնիին – Ս. Պ.) ես հաղթեցի մեկ տարում: Եվ նրանք վտարեցին տավանանայի որդուն»<sup>88</sup>: Մ.թ.ա. XVII դարի վերջերի Տարոնի գահակալը կոչված է «տավանանայի որդի», այսինքն՝ «թագուհու որդի»: Խեթական հին թագավորությունում հանգուցյալ թագավորին փոխարինում էր կա՛մ թագուհու եղբորորդին<sup>89</sup>, կամ թագավորի փեսան՝ տավանանայից ծնված արքայադստեր ամուսինը<sup>90</sup>: Տելեպինու թագավորի մ.թ.ա. 1525 թ. իրագործած բարեփոխումով ժառանգելու իրավունքը տարածվեց արքայատոհմի արական ներկայացուցիչների վրա: Այդ հին կարգը գործել է նաև Հասուվա երկրում: Ընդ որում, հասուվացիները գահընկեց անելով իրենց ցեղապետ արքային, հաստա-

84 Տե՛ս ՀԱԲ, հատ. III, էջ 53-54, Иванов В. В., Топоров В. Н., Исследования в области славянских древностей, М., 1974, էջ 176:

85 Տե՛ս Պետրոսյան Ս., «Վահագնի երգի» ակրոստիքոսների վերականգնման և վերծանման փորձ, «Լրաբեր» հաս. գիտ., Եր., 1981, N 4, էջ 83-85, Նույնի՝ Դասերը և եռադասության դրսևորումները Հին Հայաստանում, էջ 331-337:

86 Տե՛ս ՀԱԲ, հատ. III, էջ 53:

87 Տե՛ս նույն տեղում, էջ 52:

88 Иванов В. В., Логопись Хаттусилиса I, с. 264.

89 Տե՛ս նույն տեղում, էջ 265, ժան. 2:

90 Տե՛ս Герни О. Р., Хетты, М., 1987, с. 62, 190, Довгяло Г. И., О характере наследования царской власти у хеттов в эпоху Древнего царства, «Вестник древней истории», М., 1964, N 1, с. 23-24.

տել էին նաև այն իրողությունը, որ այստեղ ևս գործել է խեթական պանկուսի կամ տուլիայի<sup>91</sup> լիազորություններով օժտված համացեղային մի բարձր հաստատություն:

Գահաժառանգման հին կարգի համաձայն, Հայկի հարազատ որդիները գահի հավակնորդներ լինել չէին կարող: Իսկ ո՞վ էր լինելու այդ հավակնորդը: Ըստ ամենայնի՝ Կադմոսը: Որ սա է եղել հավակնորդը, ցույց է տալիս այն հանգամանքը, որ մինչև Բելի հարձակումը Հարք տեղափոխված Հայկը նրան էր վստահել իր նախկին տիրույթի պահպանությունը, որը պատմիչները, Մար Աբասի հետևությամբ, շփոթել են Կադմեայ տան հետ (վերջինը Կադմոսի տոհմի ժառանգական տիրույթն էր): Կադմոսի՝ միակ հավակնորդ լինելը երևում է նաև այն հանգամանքից, որ հաղթանակից հետո թշնամական ավարից բաժին ստացած և հանվանե հիշատակված միակ մարդը նա էր<sup>92</sup>: Այդպիսի մեկը կարող էր գահի օրինական հավակնորդ ու Հայկի իրավահաջորդը լինել: Այս դեպքում գահաժառանգման հին կարգի համաձայն, Կադմոսը լինելու էր Հայկի քրոջ որդին: Քեռիզարմիկ ազգակցական սերտ կապի արձագանքներն են առկա հայկական «Ձին՝ հորը, տղան քեռուն կը նմանի», «Քեռու մալը (գույքը) եկյանինն ա» և նույնաբնույթ այլ առածներում<sup>93</sup>: Անդրադառնալով «Մասնա ծռերի» Քեռի Թորոսի կերպարին, Կ. Մելիք-Օհանջանյանը գրում է. «Հայկի մյուս դիմագծերը, նկարագրի հատկանիշներից մի քանիսը, ինչպես օրինակ, երկրի բարեկեցության մասին մտածելը, շեներ ու բնակավայրեր կառուցելը, սերնդի հովանավորումը... և այլն, այս բոլոր գծերը փոխանցված են Քեռի Թորոսին», «Քեռի Թորոսը «մահ» չունի. նա անմեռ է ու անվախճան այնքան ժամանակ, որքան գոյություն ունի իր սերունդը,- քրոջ սերունդը, իր ազգ ու տակը»<sup>94</sup>: Այդպիսին էին լինելու նաև Հայկ-Կադմոս ազգակցական կապի դրսևորումները:

Մեր հին պատմիչները, ինչպես վերևում նշվեց, Կադմոսին համարում են Հայկ նահապետի թոռը՝ նրա Արամանյակ որդու որդին: Առեղծվածը ստեղծվել է **հաւ** բառի միջոցով: Գրաբարում **հաւ**-ը «պապ, մեծ հայր» էր նշանակում, բայց նրա արմատակից բառերը հնդեվրոպական տարբեր լեզուներում միայն «պապ» չեն նշանակում, այլ նաև «քեռի»<sup>95</sup>:

Ընդ որում, վերջինն է բառի նախնական իմաստը, իսկ մեր պատմիչները (ըստ երևույթին, Մար Աբասի հետևությամբ) **հաւ** բառը հասկացել

91 խեթական պանկուսի և տուլիայի վերաբերյալ տե՛ս «История древнего Востока», Под ред. В. И. Кузищина, «Высшая школа», Москва, 1979, с. 199-200; Авдиев В. И., նշվ. Աշխ., с. 333.

92 Տե՛ս **Խորենացի**, Ա, ժ-ժա: Հայկի կողմից «թոռ» Կադմոսին կալվածք պարգևելու դեպքը (նույնիսկ Հայկի ավագ որդի՝ նրա «հայր» Արամանյակից առաջ) Հայկազանց տոհմում այլևս չհանդիպող, նաև չպատճառաբանված, միակ դեպքն է:

93 **Նանայանյան Ա.**, Առածանի, ԵրԶ, 1960, էջ 189, 264, 275, 331:

94 **Մելիք-Օհանջանյան Կ.**, Միթրա-Միիրի արքայականներն ու գործակալները, «Գրական-բանասիրական հետախուզումներ», Եր., 1946, էջ 324:

95 ՀԱԲ, հատ. III, էջ 66-67, ИЯИ, т. I, с. 170-176.

են հետին՝ «պապ» նշանակությամբ<sup>96</sup>, ուստի Կադմոսի **հաւ**//«քեռի» Հայկը դարձել է Կադմոսի **հաւ**//«պապ» Հայկ:

Կադմոսը օրինական գահաժառանգ կհամարվեր, եթե նաև թագուհու (տավանանա), այսինքն՝ Հայկի կնոջ եղբորորդին լիներ: Հայկի ցեղը, հազարամյակների խորքից եկած երկմիասնական կառուցվածքի համաձայն, բաղկացած էր արական և իգական համարված տոհմերից, և նրանք արտամուսնական կապի մեջ էին միմյանց հետ: Ըստ այդմ՝ Կադմոսի մայրը «արական» («քռշի») տոհմից էր՝ Հայկի քույրը, իսկ Հայկի կինը Կադմոսի նման «իգական» «օձի» տոհմից էր, ուստի Հայկի գարմիկ Կադմոսը միևնույն ժամանակ տավանանայի եղբոր որդին էր: Հայկը վերացրել էր գահաժառանգման հին կարգը: Խորենացու հաղորդմամբ՝ «Յետ որոյ կեցեալ և այլ ևս ամս ոչ սակաւս՝ մեռանի՝ յանձն առնելով զբովանդակ ազնն **Արամենակայ որդւոյ** իւրում»<sup>97</sup>: Այսպիսով՝ Հայկը ոչ միայն գահաժառանգման կարգը իգական գծից փոխել էր արականի, այլև հիմք էր դրել հին և միջնադարյան Հայաստանում կիրառված այն ավանդույթին, որի համաձայն՝ գահը ժառանգում էր կյանքից հեռացած գահակալի ավագ որդին:

Հայկը փոխել էր նաև հայոց հին բանակի ղեկավարման ձևը: Մինչ բարեփոխումը բանակի ղեկավարները երկուսն էին՝ ըստ ցեղի երկմիասնական կառուցվածքի<sup>98</sup>: Նախ Հայկն ինքը դարձավ բանակի միանձնյա ղեկավարը, բայց պահպանեց նաև երկու հրամանատարների ինստիտուտը: Հաղթական ձակատամարտից առաջ դասավորելով իր ուժերը՝ նա «կարգէ զԱրամանեակն երկու եղբարքք ընդ աջմէ, և զԿադմոս և զայլս երկուս յորոնց իւրոց ի ձախմէ, զի արք կորովիք էին յաղեղն և ի սուսեր, և ինքն առաջի»<sup>99</sup>: Ճակատամարտից հետո Հայկը վերացրեց երկու հրամանատարների ինստիտուտը և բանակի ղեկավարումը հանձնեց իր Խոռ որդուն:

Բարեփոխումների հարցում Հայկն ավելի առաջ էր անցել: Հաղթանակից հետո ընդարձակվող Հայկազանց ցեղամիության մեջ նա էր ներդրել հասարակության եռադասյա՝ իր տոհմում ընդունված կառույցը: Հայկի տոհմը, ըստ հնից եկած հնդեվրոպական ավանդույթի, ուներ երեք հարյուրյակ (հմնտ. Հին Հռոմի *tribus*-ները)<sup>100</sup>, որոնց դասապետերը իր երեք որդիներն էին. Արամանյակը՝ հողագործների, Խոռը՝ զինվորականների,

96 Հւա բառով է կազմված **Խավու ծոր/Հավու ծոր** տեղանունը՝ Հայոց ծորում Հայկի հաղթանակի վայրում (տես **Սրվանձության Գ.**, նշվ. Աշխ., էջ 79, ծան. 1):

97 **Խորենացի**, Ա, ժբ:

98 Հմնտ. **Պետրոսյան Ա.**, Ասուվա երկիրը և զուգ առաջնորդների սոցիալական ինստիտուտը, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 2002, N 3, էջ 261-276 (Հնդեվրոպական զուգահեռները տես ИЯИ, т. II, с. 776-779, 787):

99 Նույն տեղում, Ա, ժա: Արամանյակը գլխավորում էր ցեղային աշխարհագրի արական (քռշի) կեսի, իսկ Կադմոսը՝ իգական (օձի) կեսի մարտիկներին:

100 Տես «История древнего Рима», под ред. А. Г. Бокшанина и В. И. Кузищина, М., 1971, էջ 48, Dumézil G., La religion Romaine archaïque, Paris, 1974, էջ 253-273, **Պետրոսյան Ա.**, Ղասերը և եռադասության դրսևորումները, էջ 121-127:

Մանավազը՝ քրմական դասի<sup>101</sup>: Այսպիսին էր նաև Հայկի նախնական տոհմը, երբ «թուով իբր երեքհարիւր» էր<sup>102</sup>: Հազարամյակներ էին անցել, ուստի պատմական Հայկի ժամանակաշրջանում տոհմական 300-ը վերածված էր լինելու երեք դասերի վերնախավային կառույցի:

Ուշագրավ է, որ իր որդիներից ավագին էր Հայկը նշանակել հողագործների դասապետ, իսկ հետո՝ նաև իրեն ժառանգորդ: Հայկյան այսպիսի մոտեցմամբ է ընթացել հետագայում Ուրարտուի ձևավորումը, որտեղ երեք դասերից գլխավորը հողագործների դասն էր՝ իր վերնախավից ծագած բիայնական արքայատոհմով<sup>103</sup>: Եռադասյա հասարակության հայկյան տարբերակի կիրառման արդյունավետության<sup>104</sup> մասին է խոսում ժողովրդական հեքիաթներում (Հայկից 45 դար հետո անգամ) նրա վերհուշի պահպանված լինելու փաստը: 19-րդ դարի վերջին գրառված Գարդնանի (Տավուշ-Ղազախ) հեքիաթներից մեկում պատմվում է հետևյալը: Թագավորը երեք կին է ունենում, երեքն էլ՝ չբեր: Այդ կանայք նրա վեզիրի, վեքիլի և ռանչպարի դուստրերն էին: Դավրեշի տված երեք խնձորներն ուտելով՝ նրանք բուժվում են: «Էդ օրիցը հըլա մի տարի թամամ անց կացած չի լըմ (լինում), թագավորի իրեք կնանիքն էլ չոքում են, իրեք տղա են պերում, էն ռանչպարի (հողագործի) աղջկա պերած տղեն էնքա՛ն սիրուն, էնքա՛ն նախշուն ա լըմ, որ սաղ աշխարքընը իրա նմանը չի ունենում: Ճակատին էլ մի պլուխի (կլոր) խալ ա ունենում, մի խոսքով էնքան սիրուն ա լըմ, որ ըբնակին (արեգակ) ասըմ ա. «Դու դուս մի կյալ, ես տեմ լիս տալ»<sup>105</sup>: Սա ապագա թագավորն էր, որը, ծնված լինելով հողագործի աղջկանից, համարվելու էր հողագործների դասի շահերի արտահայտիչը:

## 5. Պատմական Հայկի բարեփոխումները պաշտամունքի և գաղափարախոսության ոլորտներում

Որպես Հայկազանց ցեղամիության գլխավոր պաշտամունք Հայկը հռչակել էր իր ցեղային Հայկ աստծո պաշտամունքը: Մինչև այս ոլորտում նրա իրականացրած բարեփոխումը Հայկ աստծուն ու նրան զուգահեռ նույնաբնույթ առասպելաբանական կերպարներին է վերագրված եղել ժա-

101 Տե՛ս **Պետրոսյան Ա.**, Դասերը և եռադասության դրսևորումները, էջ 177-178:

102 Տե՛ս **Խորենացի**, Ա, Ժ:

103 Տե՛ս **Պետրոսյան Ա.**, Դասերը և եռադասության դրսևորումները, էջ 172-182:

104 Հնդեվրոպական եռադասյա հասարակական կառույցի ազդեցությունը նկատելի է Նոյ Նահապետի Սեմ, Քամ, Հաբեթ որդիների մասին աստվածաշնչյան ավանդության վրա (տե՛ս **Պետրոսյան Ա.**, Հայ-հնդկական և հայ-աստվածաշնչային մի զուգահեռ, «ԳՊՄԻ գիտ. նստաշրջանի (հոկտեմբեր, 1996) գիտ. աշխ. ժողովածու», II, Գյումրի, 1996, էջ 137-138):

105 «Հայ ժողովրդական հեքիաթներ», հատ. VIII, Եր., 1977, էջ 696-705: Այլ հեքիաթներում այդ երեքը թագավորի աղջիկներն են՝ ամուսնացած երեք դասերի ներկայացուցիչների հետ: Գլխավոր կերպարը արտադրողների դասի ներկայացուցիչն է՝ ապագա թագավորը (հմմտ. «Հայ ժողովրդական հեքիաթներ», հատ. X, Եր., 1967, էջ 110-116, հատ. XII, Եր., 1984, էջ 524-539, հատ. XIII, Եր., 1985, էջ 169-177):

մանակի ընթացքը կարգավորողի դերը<sup>106</sup> (որովհետև ինչպես Հայկն/Օրիոնը, այնպես էլ Բույլք/Պլեյադները, խոր նախնադարից սկսած, ժամադիտակի դեր են կատարել), **շրջան Հայկին** է կոչվել (սակ՝ **Հայկայ շրջան**) Սոթիսի՝ 1460 տարի պարունակող պարբերաշրջանը, իսկ տարվա 12 ամիսների անվանադիրները եղել են Հայկ աստծո որդիներն ու դուստրերը<sup>107</sup>: Բայց պատմական Հայկի բարեփոխման հետևանքով է նրա համանուն աստվածը դարձել, Կ. Մելիք-Օհանջանյանի բնութագրմամբ, մեր նախնիների «ժամանակի ու երկնքի գերագույն աստվածը»<sup>108</sup>: Եթե Հայկ աստվածը գերագույն հոչակված չլիներ, չէր կարողանա իր աստվածային անձի մեջ միավորել ամպրոպային և արևային աստվածների բնորոշ գծերը: Դա երևում է Գեղամա լեռների այն ժայռապատկերից, որում նա պատկերված է Ջ-աձև մարմնով, նետասլաքի տեսք ունեցող գլխով, մի ձեռքում՝ խաչ (արևային լույսի խորհրդանիշը), մյուսում՝ բումերանգ (կայծակի խորհրդանիշը)<sup>109</sup>:

**Երբեմն դժվարությամբ է որոշվում, թե Հայկի մասին հաղորդումներում խոսքն ո՞ւմ մասին է՝ նախնական Հայկ աստվածության՞, գերագույն աստված Հայկի՞, թե՛ պատմական Հայկի կամ Հայկ անվամբ հանդես եկող պատմական Հայկի նախնիների հավաքական կերպարի:** Նույնպիսի դժվարության առջև է մարդ կանգնում առանձին ժայռապատկերներում Հայկի կերպարը մեկնաբանելիս: Պատմական Հայկի հաղթանակի վայրում՝ Հայոց ձորում գտնված և մինչև Մեծ եղեռնը **Աստվածաշեն** կոչված գյուղի անվան առնչությամբ Գ. Սրվանձոյանցը ենթադրում էր, որ դա կարող էր լինել Հայկի կառուցած Հայկաշենը<sup>110</sup>: Ղ. Ալիշանն էլ շեշտում էր, որ «Աստուածաշեն անունը նրա հնամենիության նշանն է: Քրիստոնեական դարերում այսպիսի անուն չէր կարող դրվել, և սա **Աստուած** անվան հնագույն պահպանված հիշատակարանն է»<sup>111</sup>: Եթե գյուղն այդպես չի կոչվել քրիստոնեության ճանաչած Աստծո անունով, ուրեմն այդպես է կոչվել իր իրական հիմնադրի՝ **Աստուած** պատվանունը կրած անձի անունով: Իսկ դա կարող էր լինել միայն ու միայն պատմական Հայկը՝ Բել-Սարգոնի դեմ Հայոց ձորում հաղթանակ տարած մեր նախահայրը:

**Հայկ աստծո նոր կերպարը, պահպանած լինելով իր հին գծերը, միննույն ժամանակ համահավաքն էր հայկական շատ ցեղերի գլխավոր աստվածների, մանավանդ իր անվանն իմաստակից «հայր» անունը կրողների:** Ժողովրդի մեջ այլևայլ անուններով հայտնի մյուս

106 Տե՛ս Թադիադեանց Մ., Ղիցաբանություն, Կալկաթա, 1830, էջ 9:

107 Տե՛ս Ալիշան Ղ., Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Եր., 2002, էջ 69, 75-79, 124:

108 Մելիք-Օհանջանյան Կ., նշվ. աշխ., էջ 321:

109 Տե՛ս Մարտիրոսյան Հ., Իսրայելյան Հ., նշվ. աշխ., նկ. 309:

110 Տե՛ս Սրվանձոյանց Գ., նշվ. աշխ., էջ 79, ծան. 1:

111 Ալիշան Ղ., Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, էջ 18:

աստվածներն այդուհետ համարվել են Հայկի սերունդները: Դրանցից են Տորքը, Գեղամը, Շարան, Արան, Փառոխը, Ցուլակը: Գերագույն աստված Հայկի պաշտամունքի մի բաղադրիչն էլ եղել է աստվածացված պատմական Հայկի պաշտամունքը: Դեռևս Հայկի կենդանության օրոք էր դրվելու դրա հիմքը (Բելի օրինակը միակը չէր): Իր մահից հետո որպես աստվածացված նախնի, ամենայն իրավամբ, Հայկը պաշտվել է, ուրեմն նաև տեղ է ունեցել Հայկ աստծո համահավաք-միաձույլ պաշտամունքում՝ դառնալով Հայկի վիպական կերպարի առանցքը:



Նկ. 2

Պատմական Հայկի աստվածացված լինելու մասին է խոսում Գեղամա լեռների՝ ծիսական պար պատկերող ժայռապատկերներից մեկը (նկ. 2): Դրա կենտրոնական դեմքը քարայծ գոհաբերող անձն է, նրա ոտքերի տակ գետնատարած քարայծն է, նրանից վերև փոքր շուն է պատկերված, իսկ շրջապատում՝ ևս երեք անձինք<sup>112</sup>: Հ. Մարտիրոսյանը նկատել է տալիս, որ այս «ժայռապատկերը գտնվում է մ.թ.ա. III հազարամյակի հուշարձանների շարքում և թվագրվում է նույն ժամանակաշրջանով»<sup>113</sup>: Մեր կարծիքով՝ ծիսական գոհաբերում կատարելու առթիվ այստեղ պատկերված են արդեն աստվածացված Հայկը և նրա երեք՝ նույնպես աստվածացված դասապետ որդիները (բոլորը մերկ են պատկերված): Հայկի աստվածացված որդիների խորհրդանիշներն են երկնքում համարվել, հավանաբար, Հայկն/Օրիոն համաստեղության Օրիոնի գոտու ծ, ε, ζ աստղերը՝ կոչված նաև **երեք թագավորներ, երեք քրմեր**<sup>114</sup>: Հայկի գավակների աստվածացված լինելու մասին է վկայում նաև վանեցիների համար ժամադիտակի դեր կատարած Կշիռ/Հայկն համաստեղության մասին պատմող ավանդա-

112 Տե՛ս **Մարտիրոսյան Հ.**, Գեղամա լեռների ժայռապատկերները, «Հայաստանի հնագիտական հուշարձանները. ժայռապատկերներ», 11, պրակ III, Եր., 1981, աղ. 74, նկ. 1:

113 Նույն տեղում, էջ 57, **Պետրոսյան Ս.**, Քոչարի պարի ծիսական հենքը, «Արվեստ և ժամանակ. Հայացք Գյումրուց», Գյումրի, 2010, N 1-2, էջ 25-29:

114 Տե՛ս **Ալիջան Ղ.**, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, էջ 67, **Թումանյան Բ.**, Հայ աստղագիտության պատմություն (XIX դ. սկզբից մինչև 1920 թ.), Եր., 1968, էջ 90:

գրույցը. «Հայկ նահապետն ունեցել է երեք որդի և երեք աղջիկ, որոնք աստղեր են դարձել: Երբ հորիզոնի վրա բարձրանում են Կշիռ կոչված աստղերը, ասում են՝ «Խեքեր (= հեքեր, հայքեր) էլան», երբ նրանք թեքվում են դեպի արևմուտք, ասում են՝ «Խեքեր մտան»<sup>115</sup>: Եթե Հայկի երեք որդիները դարձել են Հայկն/Օրիոն համաստեղության՝ երկրորդ մեծության  $\delta$ ,  $\epsilon$ ,  $\zeta$  աստղերը, ապա ենթադրելի է, որ դուստրերն էլ, նույնպես երեքը լինելով, դարձած կլինեին համաստեղության ավելի պայծառ՝ առաջին մեծության  $\alpha$ ,  $\beta$ ,  $\gamma$  աստղերը: Ամենայն հավանականությամբ, Հայկի այս դուստրերը երկնքում գրավել են իրենց առասպելաբանական նախատիպերի տեղը: Որպես ժամանակի անձնավորում Հայկ աստծո դուստրեր՝ նրանք նման էին լինելու հունական առասպելաբանության այն երեք քույրերին, որոնք համարվում էին ժամանակի անձնավորումները և կրում էին **Օրայ** ( $\text{Ὠραί}$  «ժամանակներ») ընդհանուր անունը<sup>116</sup>:

Քննության առարկա ժայռապատկերի վերևում պատկերված փոքր շունը հավանաբար խորհրդանիշն է հին հայերի կողմից **Շուն/Շնիկ** կոչված Սիրիուս աստղի<sup>117</sup> (հմմտ. Սիրիուսի լատին. *Canicula* «Շնիկ» անունը)<sup>118</sup>: Հին հույները Սիրիուսը համարում էին որսորդ Օրիոնի հետ երկնքում հայտնված նրա շունը<sup>119</sup>: Ժայռապատկերում Սիրիուսի առկայությունը պայմանավորված է լինելու նրանով, որ ամառային արևադարձին արևածագը դիմավորում էր երկրակամարում վերստին հայտնված Սիրիուսը: Է. Պարսամյանի հաշվարկներով՝ այդպես եղել է մ.թ.ա. 2800–2600 թթ.<sup>120</sup>, երբ Արարատյան դաշտի Մեծամոր հնավայրի բնակիչների երկրպագության առարկան կարող էր եղած լինել Սիրիուսը<sup>121</sup>: Հավելենք՝ Սիրիուսը Օրիոն/Հայկն համաստեղության հետ, որովհետև հնդեվրոպական միասնության ժամանակաշրջանում և հետո դրանք մեկ միասնական պաշտամունքի բաղադրամասեր էին կազմում:

Հայկ աստծո նորացված պաշտամունքի տարածումով Հայկական լեռնաշխարհում սկիզբ էր դրվել «հայկազնացման» գործընթացին. հայախոս շատ ցեղեր սկսել էին իրենց ևս **հայկազուններ համարել և հայեր կոչվել**<sup>122</sup>: Այդպիսով **Հայկազանց** անվանումը հետզհետե տարածվեց ամբողջ լեռնաշխարհի վրա և դարձավ **Հայք** երկրանվանը զուգահեռ գործածական ձևերից մեկը: Գաղափարախոսական այդ հենքը հայախոս էթնոսը

115 **Ղանալյան Ա.**, Ավանդապատում, Եր., 1969, էջ 10:

116 Տե՛ս «Древнереческо-русский словарь», т. II, М., 1958, էջ 1807:

117 Տե՛ս **Ալիշան Ղ.**, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, էջ 69, **Թումանյան Բ.**, նշվ. աշխ., էջ 95:

118 Տե՛ս **Дворецкий И. X.**, Латинско-русский словарь, М., 1976, էջ 151, 935:

119 Տե՛ս **Тахо-Годи А.**, Орион, «Мифы народов мира», т. II, էջ 262:

120 Տե՛ս **Պարսամյան Է.**, Փոքր բլուրի հարթակների աստղագիտական նշանակությունը, «Մեծամոր (Ուսումնասիրություն 1965-1966 թթ. պեղումների տվյալներով)», Եր., 1973, էջ 148:

121 Տե՛ս նույն տեղում:

122 Տե՛ս **Խորենացի, Ա, Ժբ, Բ, ք:** Ղրա վկայությունը կարելի է համարել Հայկի խորհրդանշանի՝ զարդանախշի տեսքով առկայությունը, օրինակ, բրոնզիդարյան Շիրակի կավանդոթների (տե՛ս **Хачатрян Т.**, Древняя культура Ширака III-I тысяч. до н. э., Ер., 1975, էջ 66, рис. 25, էջ 102, рис. 53, էջ 103, рис. 56, էջ 104, рис. 57, էջ 105, рис. 60, էջ 194, рис. 103) և դաշույնի վրա (տե՛ս նույն տեղում, էջ 199, рис. 112):

համախմբող և հայ ժողովրդի ձևավորմանը (կազմավորմանը) նպաստած գործոններից մեկն էր: **Հայկի երկիր, Հայկի ժողովուրդ և Հայի երկիր, հայ ժողովուրդ** հասկացությունները (հմմտ. **հայկ**-ական/\***հայ**-ական) համարժեքներ էին նաև օտարների համար: Մովսես Խորենացու հաղորդմամբ՝ այդպես էին ընկալում, օրինակ, մեր հարևան մարերը: Տիգրան Երվանդյանի կողմից իրեն սպառնացող վտանգի մասին երազը մարաց Աժդահակ թագավորը իր շուրջբոլորը հավաքված մտերիմներին սկսել է պատմել հետևյալ կերպ. «Էր ինձ, ասէ, ո՛վ սիրելիք, լինել այսօր յերկրի անծանոթում, մերձ ի լեառն մի երկար յերկրէ բարձրութեամբ (ակնարկված է Մասիսը – Ս. Պ.), որոյ գագաթնն սաստկութեամբ սառնամանեաց թուէր պատեալ. և ասէին գոգցես **յերկրին Հայկազանց** զայս լինել»<sup>123</sup>: Իսկ Տիգրան Երվանդյան-մարաց Աժդահակ (Աստիագես) թագավոր հակամարտության պատմական հենքը վերաբերում է մ.թ.ա. VI դարի կեսին նախորդած տարիներին:

Հայկի հիմնած և իր հետնորդների օրոք ընդարձակված Հայկազանց ցեղամիությունը ավելի ուշ կազմավորվել էր: Նրա կազմում ընդգրկված հայախոս ցեղային երկրները, ինքնուրույն դառնալով, ստեղծել էին նոր դաշինքներ և ցեղամիություններ: Այդուհանդերձ, դրանք պահպանել էին թե՛ Հայկ աստծո պաշտամունքը, թե՛ դրան սերտաձած իրենց՝ հայկազուններ լինելու համոզմունքը: Ինչքան էլ որ ժամանակի ընթացքում Հայկի պաշտամունքը փոփոխություններ էր կրել, այդուհանդերձ շարունակում էր գոյատևել, ինչի մասին են խոսում նաև մեր «Նշանագիր իմաստնոց»-ները Հայկի խորհրդանշանը կրկնող նշանին տրված «աղանդ» բացատրությամբ<sup>124</sup>: Ընդ որում, **աղանդ** բառը ոչ միայն «մոլար հաւատք կամ վարդապետութիւն» էր նշանակում, այլև «ձմարիտ վարդապետութիւն»<sup>125</sup>: Ըստ երևույթին, միջնադարյան մի երգում հիշատակված **Հայոց տեառն նշանը**<sup>126</sup> Հայկի խորհրդանշանն է: Մեր դյուցազնավեպում Մասնա ծոերի պահապան սուրբ նշանը՝ **Խաչ պատերազմին**, նույնպես կարող էր Հայկի խորհրդանշանի՝ որպես թեք խաչի կրկնությունը լինել: Այն ունենալու էր **▶** կամ **☒** տեսքը՝ բնորոշ ուրարտական սրբազան դրոշմներին:

### **Այսպիսով:**

Վիպական Հայկի կերպարը բնորոշող և միայն նրա վերաբերյալ գործածված **խայտակն** բառը նշանակում է «աչքի սպիտակուցի վրա բիծ ունեցող» (Ը. Աճառյան): Այսպիսի ակնհայտ նշանով բնութագրված կերպարը չէր կարող իրական նախատիպ չունենալ:

123 **Խորենացի**, Ա, իգ:

124 Տե՛ս **Աբրահամյան Ա.**, նշվ. աշխ., էջ 231, 234, 236:

125 Տե՛ս ՆՎԲ, հատ. I, էջ 33, ՀԱԲ, հատ. I, էջ 120:

126 Տե՛ս **Մնացականյան Աս.**, Ղիցաբանական եղջերուն միջնադարյան հայ արվեստում, «Բանբեր Մատենադարանի», Եր., 1977, N 12, էջ 19:



1. **Արեթածին** և **Արեթայն** մակդիրները վերաբերում են ոչ թե պատմական Հայկին, այլ աստվածաշնչյան Նոյի Հաբեթ որդու անվանը: Դրանք ծագում են հայերեն **արեթ** բառից և նշանակում են «բոցածին», «բոցեղեն»:
2. Պատմական (իրական, անձնավորյալ) Հայկը կրել է իր աստծո անունը և մակդիրները այնպես, ինչպես նրա հակառակորդ Բելը՝ իր աստծո անունը (մակդիրը): Նրանց պատմական նախատիպերը մ.թ.ա. III հազարամյակի կեսերին ապրած գործիչներ են՝ հարավհայկական ցեղերից մեկի ցեղապետ-արքա Հայկը և Միջագետքում բռնատիրած Աքքադի թագավոր Սարգոնը:
3. Պատմական Հայկի առաջին տիրույթը (ոստանը) գտնվել է Արևմտյան Տիգրիսի հովտի ձախափնյա Armi//Arme երկրում՝ աջափնյա Arman(-um) երկրի (հետագայում կոչված **Կադմեայ տուն**//սեպագր. Kadmuhi) հարևանությամբ: Դրանք միասին կարևոր հանգույց էին Հայկական լեռնաշխարհի և Ատրիք-Միջագետքի միջև:
4. Բռնակալի դեմ պայքարի մեջ մտնելուց առաջ Հայկն իր տոհմով տեղափոխվել էր հյուսիս-արևելք և իր ոստանը դարձրել Հարքը: **Հարք** տեղանունը «հայրեր» չի նշանակում: Դրա նախածնը՝ **\*Հարք-ք**-ը (հմնտ. հունալատին. Arch-ene), նշանակում էր «հերքողներ», այսինքն՝ «դիմադրողներ, հաղթահարողներ, վտարողներ»:
5. Հարքում հաստատված Հայկը միջագետքյան վտանգին դեմ հանդիման ստեղծել էր հայախոս ցեղերի մի դաշինք, որը հաղթանակից հետո վերածվել էր ընդարձակվող Հայկազանց ցեղամիության:
6. Հայկի և Բելի զինվածությունն արտացոլում է մ.թ.ա. III հազարամյակի կեսերի իրականությունը: Հայկի նետից Բելի սպանվելը վիպական մոտիվ է, բայց Հայկի և իր աղեղնավորների՝ բրոնզե ծայրակալով նետերից ընկել էին Բելի թիկնազորի բազմաթիվ աքքադացի զինվորներ: Նրանց թաղման վայրը կոչվում էր **Գերեզմանք/Գերեզմանակք**:
7. Հայկազանց ցեղամիության մեջ Հայկը ներդրել էր իր տոհմի եռադայա հասարակական կարգը և երեք դասերի դասապետներ նշանակել իր երեք որդիներին: Առաջնայինը հողագործների դասն էր, որի դասապետը Հայկի ավագ որդի Արամանյակն էր:
8. Հայկը բարեփոխել էր նաև գահաժառանգման կարգը: Իգական գծով ժառանգումը նա փոխարինեց արական գծով ժառանգմամբ: Իր զարմիկ՝ քրոջորդի (միաժամանակ նաև իր կնոջ եղբորորդի) Կադմոսի փոխարեն Հայկը գահաժառանգ էր հռչակել իր ավագ որդի Արամանյակին:

9. Հայկը վերափոխել էր նաև բանակային կառույցի վերին օղակը: Ցեղի կառուցվածքով պարտադրված երկմիասնական բանակում բարեփոխումը սկսվել էր Հայկի՝ միանձնյա հրամանատար դառնալով, ապա՝ շարունակվել ցեղի երկու կեսերի հրամանատարների՝ Արամանյակի և Կադմոսի փոխարեն զինվորների դասապետ Խոռի՝ իր երկրորդ որդու նշանակումով:
10. Հայկն իր ցեղի գլխավոր աստված Հայկին հռչակել էր Հայկազանց ցեղամիության գերագույն աստված՝ ընդլայնելով նրա գործառնությունները և նրա պաշտամունքի մեջ ընդգրկելով մյուս ցեղերի գլխավոր աստվածներին: Նորացված, միաձույլ այս պաշտամունքը ներառել էր նաև արդեն աստվածացված պատմական Հայկի պաշտամունքը:
11. Հայկ աստծո նորացված, միաձույլ պաշտամունքը ընդօրինակվեց Հայկական լեռնաշխարհի հայախոս այլ ցեղերի կողմից՝ հիմք դնելով «հայկազնացման» գործընթացին՝ հայ ժողովրդի կազմավորման գործոններից մեկին:

Մ.թ.ա. III հազարամյակի կեսերին ապրած մեր նախահայր Հայկը եղել է պատմության բացառիկ դեմքերից մեկը, որին ևս կարելի է վերագրել Գարեգին Նժդեհի հետևյալ խոսքերը. «Առանց նմանների՝ ոգու առաջնորդների, ազգերը դատապարտված են քարշ գալու պատմության հետևից»<sup>127</sup>:

**Սարգիս Գ. Պետրոսյան** – հեղինակ է 2 մենագրության և ավելի քան 140 գիտական հոդվածների: Զբաղվում է Հայաստանի և Արևելքի երկրների հնագույն ու հին պատմության, ինչպես նաև հոգևոր մշակույթի հարցերով:

Էլ. հասցե՝ Vahe1996@mail.ru

---

127 **Նժդեհ Գ.**, Ամերիկահայությունը. ցեղը և իր տականքը, Սոֆիա, 1933, էջ 105:

## Summary

### EPIC HAYK, HISTORICAL HAYK AND HIS HERITAGE

Sargis G. Petrosyan

*Doctor of Sciences in History*

**Key words** – Hayk, Orion, legend, tribe, god, patrimony, Hark, tribal union, Three Estate, heritage.

The epithets of the Armenian ethnarch Hayk **Abetatsin** “born in the flame” and **Abetayn** “fiery”, in fact, was his mythological prototype of the homonymous god. This is explained by the fact that the historical prototype of the epic Hayk bore not only the name, but also the epithets of the god Hayk, his divine patron. It is also noteworthy that in this way the opponent of the historical Hayk – Bel also bore the name of his divine patron, the main god of the Akkadian pantheon – Bel (in Semitic “Bel” – lord, – the original epithet of the supreme god of the Sumerian-Akkadian pantheon Enlil).

The historical Hayk was the head of one of the southern Armenian tribes and the king of the dual country Armi-Armana, and the historical Bel is the famous king of Akkad and at the same time the despot of all Mesopotamia Sargon. They lived around the middle of the III millennium BC. Haik’s ancestral domain was located in the north of the Western Tigris River basin, and the patrimony of his relative Kadmos Arman (Armanum) was south of the river. Kadmos was not really a grandson, but the nephew (his sister’s son) of Hayk. Therefore, his ancestral possession of Arman was also referred to as the “house of Kadmos” (Armenian “tun Kadmeai”, cuneiform “Kadmukhi”). Before confronting the Akkadian despot, Hayk and his family moved to Hark, to the north of Lake Van. Having settled there, he turned Hark into the center of the “Haykazants tribal union”. Toponym **Hark** does not mean “fathers”, but it means “opposing”, “overcoming”, “casting out”.

According to ancient legends, Hayk killed Bel in battle, but this is folklore. However, no doubt, quite a few enemy soldiers fell from the well-aimed arrows of Hayk and his archers, since the place of their burial-ground was called **Gerezmanak**, that is, “Graves” (later **Gerezmanakk**). After the victory over Bel, in order to strengthen the state system and his own monarchical power, Hayk began to carry out various reforms. The head of the social estate of farmers (and producers in general) became the eldest son of Hayk Aramanyak, the head of the

military estate became his second son Khor, and the head of the priestly estate became the third son Manawaz. Hayk also changed the custom of succession to the throne. The former was through the female line, which he replaced with inheritance through the male line. Hayk proclaimed his eldest son Aramanyak his heir. The institution of two army commanders, due to the dual system of the structure of the ancient tribes, was abolished, and instead of Aramanyak and Kadmos, he entrusted the leadership of the army to his second son Khor. He declared his patron god Hayk the Supreme God, into whose cult the cults of the main deities of other tribes of the union joined. Thanks to this, after the death of Hayk, the cult of him, as a deified ancestor, also became the part of this soldered, renewed cult.

Резюме

## ЭПИЧЕСКИЙ ГАЙК, ИСТОРИЧЕСКИЙ ГАЙК И ЕГО НАСЛЕДСТВО

Саргис Г. Петросян  
*Доктор ист. Наук*

**Ключевые слова** - Гайк, Орион, предание, племя, бог, родовая вотчина, Харк, племенной союз, три сословия, наследство.

Эпитеты этнарха армян Гайка **Абетацин** «рождённый в пламени» и **Абет айн** «пламенный», в действительности, названия мифологического прототипа одноименного бога. Это объясняется тем, что исторический прототип эпического Гайка носил не только имя, но и эпитеты бога Хайка-своего божественного покровителя. Заслуживает внимания и тот факт, что таким же образом противник исторического Гайка – Бел, также носил имя своего божественного покровителя, главного бога аккадского пантеона – Бела (по-семитски «Бел» – господин, господь первоначальный эпитет верховного бога шумеро-аккадского пантеона Энлила).

Исторический Гайк был главой одного из южно-армянских племен и царем двуединой страны Арми – Армана, а исторический Бел -это знаменитый царь Аккада и одновременно деспот всей Месопотамии Саргон. Они жили примерно в середине III тысячелетия до н.э. Родовая вотчина Гайка находилась на севере бассейна реки Западный Тигр, а вотчина его родича Кадмоса

Армана (Арманум) – южнее реки. Кадмос в действительности был не внуком, а племянником (сыном сестры) Гайка. Поэтому его родовое владение Армана именовалось также как «дом Кадмоса» (арм. «тун Кадмей», клинопис. «Кадмухи»).

До выступления против аккадского деспота Гайк со своими домочадцами переселяется в Харк на север от озера Ван. Поселившись там, он превращает Харк в центр «племенного союза Хайказанц». «Харк» означает не «отцы», а «противостоящие», «преодолевающие», «изгоняющие». По древним сказаниям, Гайк в сражении убил Бела, но это лишь фольклор. Однако, без сомнения, от метких стрел Гайка и его лучников пало немало вражеских воинов, а место их погребения было названо **Герезманк**, то есть «Могилы» (позднее **Герезманакк** – «Могилки»).

После победы над Белом, в целях укрепления государственного строя и собственной монархической власти, Гайк начал проводить различные реформы. Главой социального сословия земледельцев (и производителей вообще) становится старший сын Гайка Арамаяк, начальником воинского сословия – его второй сын Хор, а главой жреческого сословия – третий сын Манаваз. Гайк изменил также обычай престолонаследия. Прежний, по женской линии, он заменил на наследование по мужской линии. Своим наследником Гайк провозгласил старшего сына Арамаяка. Институт двух командующих армией, обусловленный дуальной системой структуры древних племен, был отменен, и руководство армией вместо Арамаяка и Кадмоса доверил второму сыну – Хору. Своего покровителя бога Гайка он объявил Верховным богом, в культ которого влились культы главных божеств других племен союза. Благодаря этому, после смерти Гайка, культ его, как обожествленного предка, также вошел в состав этого спаянного, обновленного культа.

## REFERENCES

6. “Drevnegrechesko-russkij slovar’”, t. II, M., 1958 (In Russian).
7. “Hay zhoghovrdakan hek’iat’ner”, hat. VIII, Yer., 1977, hat. X, Yer., 1967, hat. XII, Yer., 1984, hat. XIII, Yer., 1985 (In Armenian).
8. “Istorija Drevnego Rima”, M., 1971 (In Russian).
9. “Istorija Drevnego Vostoka”, M., 1979 (In Russian).
10. “Nor bargirk’ haykazean lezui”, hat. I, Yer., 1979 (In Armenian).
11. **Abeghyan M.**, Yerker, hat. I, Yer., 1966 (In Armenian).
12. **Abrahamyan A.**, Hayots’ gir yev grch’ut’yun, Yer., 1973 (In Armenian).
13. **Acharyan H.**, Hayeren armatakan bararan, hat. II, Yer., 1973 (In Armenian).
14. **Acharyan H.**, Hayots’ andznanneri bararan, hat. III, Yer., 1946 (In Armenian).

15. **Achařyan H.**, Hayots' grerë, Yer., 1984 **(In Armenian)**.
16. **A-Dö**, Vani, Bit'lisi ev Ĕrżrumi vilayet'nerë, Yer., 1912 **(In Armenian)**.
17. **Adonts' N.**, Hayastani patmut'yun, Yer., 1972 **(In Armenian)**.
18. **Aghayan Ĕ.**, Aknarkner hayots' tomarneri patmut'yan, Yer., 1986 **(In Armenian)**.
19. **Alishan GH.**, Yushikk' hayreneats' hayots', hat. A Venetik, 1869 **(In Armenian)**.
20. **Alishan Gh.**, Hayots' hin havatk'ë kam het'anosakan kronë, Yer., 2002 **(In Armenian)**.
21. **Avdiev V. I.**, Istorija drevnego Vostoka, L., 1953 **(In Russian)**.
22. **Badalyan H.**, Ĕrats'uyts'i patmut'yun, Yer., 1970 **(In Armenian)**.
23. **Brutyan Gr.**, Ĕrats'uyts' hayots', Yer., 1997 **(In Armenian)**.
24. **Ch'amch'yants' M.**, Hayots' patmut'yun, hat. III, Yer., 1984 **(In Armenian)**.
25. **Djakonov I. M.**, Assiro-vavilonskie istochniki po istorii Urartu, "Vestnik drevnej istorii", 1951, N 2, 3, 4 **(In Russian)**.
26. **Djakonov I. M.**, Goroda gosudarstva Shumera, "Istorija drevnego mira. Rannjaja drevnost", I, M., 1989 **(In Russian)**.
27. **Djakonov I. M.**, Rannije despotii v Mesopotamii, "Istorija drevnego mira. Rannjaja drevnost", I, M., 1989 **(In Russian)**.
28. **Dovgjalov G. I.**, O xaraktere nasledovaniya carskoj vlasti v drevnej Xettskoj imperii, "Vestnik drevnej istorii", M., 1964, N 1 **(In Russian)**.
29. **Dvoretcki I. X.**, Latinsko-russkij slovar', M., 1976 **(In Russian)**.
30. **Gamkrjelidze T.V., Ivanov V.V.**, Indojevropejskij jazyk i indoevropejcy, t. I-II, Tbilisi., 1984 **(In Russian)**.
31. **Garagashean A.**, Bnakan patmut'iwn Hayots', T'iflis, 1895 **(In Armenian)**.
32. **Garelli P.**, Zapiski toponimov iz arxiva Ebly, "Drevnjaja Ebla (Raskopki v Sirii)", M., 1985 **(In Russian)**.
33. **Garelli P.**, Topologičeskije zametki iz arxivov Ebly, "Drevnjaja Ebla", M., 1985 **(In Russian)**.
34. **Gerni O. R.**, Xetty, M., 1987 **(In Russian)**.
35. **Ghanalanyan A.**, Ařatsani, Yer., 1960 **(In Armenian)**.
36. **Hakobyan T'., Melik'-Bakhshyan St., Barseghyan H.**, Hayastani yev harakits' shrjanneri teghanunneri bařaran, hat. II, Yer., 1988 **(In Armenian)**.
37. **Hmayakyan S.**, Vani t'agavorut'yan petakan kronë, Yer., 1990 **(In Armenian)**.
38. **Ivanov V. V.**, Letopis' Xattusilisa I, "Xrestomatija po istorii drevnego Vostoka", chast' I, M., 1980 **(In Russian)**.
39. **Ivanov V. V., Toporov V. N.**, Issledovaniya v oblasti slavjanskix drevnostej, M., 1974 **(In Russian)**.
40. **Ivanov V. V.**, Vyjavlenije razlichnyx xronologičeskix plastov v drevnearmjanskom jazyke. Problema pervonachal'noj struktury teksta gimna Va(x)agnu, "Ajkazuniner", Jer., 2013 **(In Russian)**.
41. **Jahukyan G.**, Hayeren stugabanakan bařaran, Yer., 2010 **(In Armenian)**.
42. **Jahukyan G.**, Hayerenë yev hndevropakan hin lezunerë, Yer., 1970 **(In Armenian)**.
43. **Kapantsjan G.**, Istoriko-lingvističeskije raboty, Jer., 1956 **(In Russian)**.
44. **Khachatrjan T.**, Drevnjaja kul'tura Shiraka III-I tys. do n. e., Jer., 1975 **(In Russian)**.
45. **Khach'atryan Ast.**, Hayastani sepagrakan shrjani k'nnakan patmut'yun, Yer., 1933 **(In Armenian)**.
46. **Khach'atryan V.**, Hayk nahapetë vorpes patmakan andz, "Haykazuniner", Yer., 2013 **(In Armenian)**.

47. **Khnikyan Ō.**, Hayots' ts'eghaserut'yan harts'i shurjē, "Haykazuniner", Yer., 2013 (**In Armenian**).
48. **Kun N.**, Hin Hunastani legendnern u araspelnerē, Yer., 1956 (**In Armenian**).
49. **Lalayan Ye.**, Yerker, hat. II, Yer., 1988 (**In Armenian**).
50. **Malkhasyants' St.**, Hayeren bats'atrakan bararan, hat. I, Yer., 1944 (**In Armenian**).
51. **Manandyan H.**, Hayastani glkhavor chanaparhnerē ēst Pevtingeryan k'artezi, Yer., 1936 (**In Armenian**).
52. **Martikyan S.**, Hayots' razmatesakan mtk'i tsagumn ēst Movses Khorenats'u "Hayots' patmut'yan" "Hayk yev Bel" vipask'i, "Haykakan lernashkharhē hayots' yev hamashkharhayin k'aghak'akrt'ut'yan bnōrran", Yer., 2004 (**In Armenian**).
53. **Martirosyan H.**, Geghama lēneri zhayrapatkemerē, "Hayastani hnagitakan hushardzannerē. Zhayrapatkerner", 11, prak III, Yer., 1981 (**In Armenian**).
54. **Martirosyan H.**, Gitut'yunn sksvum ē nakhnadarum, Yer., 1978 (**In Armenian**).
55. **Martirosyan H.**, Hayastani nakhnadaryan nshanagreṛē yev nrants' urarta-haykakan krknaknerē, Yer., 1973 (**In Armenian**).
56. **Martirosyan H., Israyelyan H.**, Geghama lēneri zhayrapatkemerē, "Hayastani hnagitakan hushardzannerē. Zhayrapatkerner", 6, prak II, Yer., 1971 (**In Armenian**).
57. **Matjushin G. A.**, U kolibely istorii, M., 1972 (**In Russian**).
58. **Matti P.**, Raskopki Ebly, 1964-1982 gg., "Drevnjaja Ebla (Raskopki v Sirii)", M., 1985 (**In Russian**).
59. **Melikishvili G. A.**, Urartskije klinoobraznyje nadpisi, M., 1960 (**In Russian**).
60. **Melik'-Ōhanjanyan K.**, Mit'ra-Mihri arbyaknern u gortsakalnerē, "Grakan-banasirakan hetakhuzumner", Yer., 1946 (**In Armenian**).
61. **Mnats'akanyan As.**, Dits'abanakan yeghjerun mijnadaryan hay arvestum, "Banber Matenadarani", Yer., 1977 (**In Armenian**).
62. **Movsisi Khorenats'woy** patmut'iwn Hayots', Yer., 1981 (**In Armenian**).
63. **Movsisyan A.**, Hayastanē K'ristosits' arāj yerrord hazaramyakum (ēst gravor aghbyurneri), Yer., 2005 (**In Armenian**).
64. **Parsamyan Ē.**, P'ok'r bluri hart'akneri astghagitakan nshanakut'yunē, "Metsamor", Yer., 1973 (**In Armenian**).
65. **Petrosjan S.**, Plemennoj sojuz Xajasa-Azzi v sisteme dvoichnyx protivopostavlenij, "Vestnik obsh'estvennyx nauk", Jer., 1987, N 3 (**In Russian**).
66. **Petrosyan S.**, "Armenosi araspeli" yev Aramanyaki avandazruyts'i patmakan henk'ē, "Vēm", Yer., 2018, N 3 (**In Armenian**).
67. **Petrosyan S.**, "Vahagni yergi" akrostik'osneri verakangnman yev vertsanman p'ordz, "Lraber" has. git., Yer., 1981, N 4 (**In Armenian**).
68. **Petrosyan S.**, Ampropi astsu makdirnerē gahanunnerum, "VPMI mijazgayin git. nstashrjani nyut'er", Vanadzor, 2012 (**In Armenian**).
69. **Petrosyan S.**, Aramanyaki vordinerē yev nrants' tiruyt'nery yeradasut'yan tesankyunits', HH GAA Shiraki hayagitakan hetazotut'yunneri kentroni "Gitakan ashkhatut'yunner", hat. XIII, Yer., 2010 (**In Armenian**).
70. **Petrosyan S.**, Asuva yerkirē yev zuyg arajnordneri sots'ialakan instituty, "Patma-banasirakan handes", Yer., 2002, N 3 (**In Armenian**).
71. **Petrosyan S.**, Daserē yev yeradasut'yan drsevorumnerē Hin Hayastanum, HH GAA PI, "Mesrop ark'. Ashchean" matenashar, hat. 21, Yer., 2006 (**In Armenian**).
72. **Petrosyan S.**, Hay-hndkakan yev hay-astvatsashnch'ayin mi zugaher, "GPMI git. nstashrjan (hoktember, 1996) git. ashkh. zhoghovatsu", II, Gyumri, 1996 (**In Armenian**).

73. **Petrosyan S.**, Hayots' mehenagrut'yan akunk'nerum, Gyumri, 2008 **(In Armenian)**.
74. **Petrosyan S.**, Hin hayots' yeramasn amsuay khorhurdë, "Handës amsoreay", 1996, N 1-2 **(In Armenian)**.
75. **Petrosyan S.**, Khet'akan ark'a Supiluliuma I-i knik'i yev haykakan yerknayin khorhrdanschanneri ëndhanrut'yunnerë, "Vëm", Yer., 2020, N 1 **(In Armenian)**.
76. **Petrosyan S.**, K'och'ari pari tsisakan henk'ë, "Arvest yev zhamanak. Hayats'k' Gyumruts'", Gyumri, 2010, N 1-2 **(In Armenian)**.
77. **Petrosyan S.**, Mi zhayrapatkeri meknabanman yev patkeragrut'yan vertsanman p'ordz, HH GAA Shiraki hayagitakan hetazotut'yunneri kentroni "Gitakan ashkhatut'yunner", hat. XII, Yer., 2009 **(In Armenian)**.
78. **Petrosyan S.**, Movses Khorenats'in Hayastanum sepagrut'yan haytnvelu zhamanaki masin, "Vanadzori pet. mank. instituti gitazhoghovi nyut'er", Vanadzor, 2011 **(In Armenian)**.
79. **Petrosyan S., Petrosyan L.**, Shirakum yev Vanandum odzi yev odzamanuki pashtamunk'i masin, HH GAA Shiraki hayagitakan hetazotut'yunneri kentroni "Gitakan ashkhatut'yunner", hat. XIX, Gyumri, 2016 **(In Armenian)**.
80. **Petrosyan S.**, T'eshubi haykakan makdirnerë gahanunnerum, "GPMI gitakan nstashrjani nyut'er", Gyumri, 2011 **(In Armenian)**.
81. **Piotrovskij B. B.**, Vanskoje carstvo (Urartu), M., 1960 **(In Russian)**.
82. **Samuelyan Kh.**, Hin Hayastani kulturan, hat. II, Yer., 1941 **(In Armenian)**.
83. **Sebeosi** yepiskoposi Patmut'iwn, Yer., 1939 **(In Armenian)**.
84. **Shiffman I.**, Rashap, "Mify narodov mira. Enciklopedija", tom II, M., 1988 **(In Russian)**.
85. **Simonyan H.**, "Hayk yev Bel" araspel, ask', t'e irapatum?, "Haykazuniner", Yer., 2013 **(In Armenian)**.
86. **Srvandztyants' G.**, Yerker, hat. I, Yer., 1978 **(In Armenian)**.
87. **Struve V. T.**, Istorija drevnego Vostoka, L., 1941 **(In Russian)**.
88. **T'aghiadyants' M.**, Dits'abanut'iwn, Kalkat'a, 1830 **(In Armenian)**.
89. **Taxo-Godi A.**, Orion, "Mify narodov mira", tom. II, M., 1988 **(In Russian)**.
90. **T'ovma Artsruni yev Ananun.** Patmut'iwn tann Artsruneats', Yer., 1985 **(In Armenian)**.
91. **T'umanyan B.**, Hay astghagitut'yan patmut'yun (XIX d. minch'ev 1920 t'), Yer., 1968 **(In Armenian)**.
92. **Yeremyan S.**, Hayastanë ëst "Ashkharhats'oyts'"-i, Yer., 1963 **(In Armenian)**.